Դպրոցների ֆինանսական գործունեության մոնիտորինգի արդյունքների

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

2017թ.

«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Գյումրի 3102, Պուշկինի 96
Հեռ.՝ +374 312 50622
Էլ. հասցե՝ admin@asparez.am
Կայքէջ՝ www.asparez.am

«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երեւան 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 569589, 569689
Ֆաքս՝ + 374 10 569519
Էլ. հասցե՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան
Երեւան 0002, Թումանյան փ., 2-րդ փակուղի, 7/1
Հեռ.՝ +374 10 533862, 536758
Էլ. հասցե՝ info@osi.am
Կայքէջ՝ www.osf.am

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով, ինչպես նաև «Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան» հիմնադրամի աջակցությամբ: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատվությունը կրում են բացառապես «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» և «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունները, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության, ինչպես նաև «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի կարծիքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 7
Համառոտագիր 3
Ներածություն 5
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5
Հետազոտության նպատակը և մեթոդները 6
Հետազոտության ընտրանքը, գործիքները և վերլուծության սկզբունքները 7
Հետազոտության սահմանափակումները 8
ԳԼՈՒԽ 1.ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ 10
Իրավական կարգավորումներ 10
1.1 Եկամուտների վերլուծություն 11
1.2 Ծախսերի վերլուծություն 12
ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ 19
Իրավական կարգավորումներ 19
2.1 Ծնողական խորհրդի տեղեկացվածությունը և մասնակցությունը դպրոցի գործունեությանը 20
2.2 Ծնողների կողմից իրականացվող ծախսերի վերլուծությունը 22
2.2.1 Ուսումնական գործընթացի հետ կապված ծախսեր 22
2.2.2 Նվերներ դպրոցի աշխատակազմին 25
2.2.3 Դասագրքերի հասանելիության և որակի գնահատումը 26
2.2.4 Լրացուցիչ պարապմունքները և դրանց ազդեցությունը 28
ԳԼՈՒԽ 3. ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 31
Իրավական կարգավորումներ 31
3.1 Խորհրդի որոշումների ընդունումը 33
3.2 Խորհրդի նիստերի արձանագրումը 33
3.3 Դպրոցի բյուջեի, խորհրդի որոշումների հրապարակման միջոցները 34
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 39
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 42
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 44
Հավելված 1. Ուսումնասիրված իրավական ակտերի ցանկ 44
Հավելված 2. Մոնիտորինգի գործընթացում ընդգրկված դպրոցների ցանկը 45
Հավելված 3. Դպրոցների և հարցվողների ընտրության սկզբունքները 47
Հավելված 4. Հարցաթերթիկներ 49
Հավելված 5. Տեղեկատվության հարցում դպրոցի տնօրեններից 6

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքն ըստ մարզերի 7
Աղյուսակ 2. Այլ աղբյուրից ստացած ֆինանսավորումն ըստ նպատակի 11
Աղյուսակ 3. Ուսումնասիրված ծախսերը և դրանց միջինացված մասնաբաժինը բյուջեում 13
Աղյուսակ 4. Դպրոցի աշխատավարձային ֆոնդի բաշխումն ըստ հաստիքների 14
Աղյուսակ 5. Աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներն՝ ըստ տարիների և դպրոցի տեսակի (%) 15
Աղյուսակ 6. Ջեռուցման ծախսերն ըստ տարիների և դպրոցների տեսակների (հազ. դրամ) 16
Աղյուսակ 7. Մասնագիտական զարգացման ծախսերն ըստ տարիների և դպրոցների տեսակների (հազ. դրամ) 16
Աղյուսակ 8. Ընթացիկ նորոգման ծախսերն ըստ տարիների և դպրոցների տեսակների (հազ. դրամ) 17
Աղյուսակ 9. Կոմունալ վճարումներն ըստ տարիների (հազ. դրամ) 17
Աղյուսակ 10. Ծախսային հոդվածների առկայությունը և դրանց պարբերականությունը (%) 23
Աղյուսակ 11. Մեկ աշակերտի համար իրականացված ամսական ծախսերը (%) 24
Աղյուսակ 12. Վճարման հիմնական եղանակը (%-ը ընդհանուր հարցվողների մեջ) 25
Աղյուսակ 13. Դպրոցի աշխատակազմին տրված նվերներն ըստ տեսակների (%-ը ընդհանուր հարցվածների մեջ) 26
Աղյուսակ 14. Լրացուցիչ պարապմունքների դրդապատճառները 30
Աղյուսակ 15. Բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն ստացումը խորհրդի անդամների կողմից (%) 37
Աղյուսակ 16. Մասնակցությունը խորհրդի նիստերին (%) 38

Գրաֆիկների ցանկ

Գրաֆիկ 1 Բյուջեի բովանդակությանը ծանոթ լինելու մակարդակը 21
Գրաֆիկ 2 Բյուջեի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները 21
Գրաֆիկ 3. Ծնողների կողմից իրականացվող տարեկան միջին ծախսերի կառուցվածքը 22
Գրաֆիկ 4. Հարցվողների բաշխումն՝ ըստ մեկ աշակերտի համար իրականացված ամսական ծախսերի (%) 24
Գրաֆիկ 5. Ծաղկեփնջերի համար տարեկան ծախսված գումարները 26
Գրաֆիկ 6. Դասագրքերի վարձավճարների գնացուցակների մասին տեղեկատվության աղբյուրը 27
Գրաֆիկ 7. Դասագրքերի բարդությունից դժգոհություններն ըստ առարկաների 27
Գրաֆիկ 8. Լրացուցիչ վճարովի պարապմունքներ ըստ առարկաների 28
Գրաֆիկ 9. Լրացուցիչ պարապմունք իրականացնող անձը 29
Գրաֆիկ 10. Լրացուցիչ պարապմունքների ազդեցությունը գիտելիքների մակարդակի վրա՝ ըստ ծնողների 29
Գրաֆիկ 11. Արտաբյուջետային ծախսերի մասին տեղեկատվության ստացման ձևերը 35
Գրաֆիկ 12. Տեղեկատվություն ստանալու քայլերը հաշվետվության բացակայության պարագայում 36
Գրաֆիկ 13. Ծնողական խորհրդի նիստերի քանակը 36
Գրաֆիկ 14. Դպրոցի խորհրդի նիստերին մասնակցող անդամների թիվը 37

Հապավումներ

ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԲՀՀ-Հ	Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԺԱԱ	Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՔԵԿ	Քաղաքացիական երիտասարդական կենտրոն

Համառոտագիր

«Դպրոցների ֆինանսական գործունեության մոնիտորինգ»-ն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ-Հ) աջակցությամբ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից: Մոնիտորինգն իրականացվել է 2016թ. ընթացքում:

Սույն մոնիտորինգի նպատակն է ուսումնասիրել դպրոցների ֆինանսական գործունեությունը, մասնավորապես՝ որոնք են եկամտի հիմնական աղբյուրները և ծախսային ուղղությունները, ինչ ազդեցություն ունեն կառավարման խորհուրդը և ծնողները դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության վրա և որքանով է դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հրապարակային և հաշվետվողական:

Զեկույցում ներկայացվում են Հայաստանի 10 մարզկենտրոնների 40 դպրոցների 2013-2015թթ. ֆինանսական գործունեության մոնիտորինգի արդյունքները: Զեկույցը բաղկացած է 3 գլխից:

Եկամուտների և ծախսերի առումով մոնիտորինգը ցույց է տվել, որ թեև դպրոցներին տրվել է հնարավորություն լրացուցիչ եկամուտներ ստանալու, սակայն դպրոցները գրեթե չեն օգտվում այդ հնարավորությունից: Դպրոցի տնօրենները չունեն մոտիվացիա լրացուցիչ եկամուտներ ապահովելու, քանի որ ֆինանսավորման կարգը մարզպետներին հնարավորություն է ընձեռում միջոցների վերաբաշխում անել՝ հավելյալ միջոցներ հատկացնելով այն դպրոցներին, որոնք ֆինանսավորման բանաձևով քիչ գումար են ստանում: Բացի այդ, լրացուցիչ եկամուտներ ստանալու համար դպրոցները պետք է բացեն արտաբյուջետային հաշիվ, ինչի արդյունքում դպրոցը հայտնվում է հարկային մարմինների հատուկ ուշադրության կենտրոնում: Արդյունքում, դպրոցների եկամուտը գերազանցապես գոյանում է պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին:

Ծախսերի առումով, ուսումնասիրված դպրոցների բյուջեի միջին հաշվով 96%-ից ավելին հատկացվում է աշխատավարձերին, հարկերին, ջեռուցմանը և կոմունալ վճարներին: Դպրոցի զարգացման համար գումարներ գրեթե չեն մնում: Կլիմայական գործոնը, դպրոցի շենքային պայմանները հաշվի չեն առնվում ֆինանսավորման գործընթացում: Բավարար գումարներ չունենալով մասնագիտական զարգացման, ջեռուցման և այլ առաջնահերթությունների համար, դպրոցները գումարներ են ծախսում թափուր տեղերի հայտարարությունների, տարբեր ծառայությունների տեսուչներին վճարելու համար: Թեև դպրոցի կառավարման խորհրդին տրված են լիազորություններ ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում, սակայն փաստացի բոլոր որոշումները կայացվում են լիազորված մարմնի ֆինանսական վարչության կողմից, իսկ խորհուրդն ընդամենը ձևականորեն վավերացնում է այդ որոշումները:

Ուսուցման անբաժանելի մաս դարձած արտաժամյա պարապմունքների հաճախում է աշակերտների 1/5-ը: Այս բարձր ցուցանիշը պայմանավորված է առաջին հերթին դպրոցի տված գիտելիքի անբավարար մակարդակով և ընդունելության քննությունների պահանջներին դրանց անհամապատասխանությամբ:

Ոչ ֆորմալ ծախսերը, մանկավարժների կամ դպրոցի աշխատակազմի նվերները ծնողների ճնշող մեծամասնության կողմից չեն ընկալվում որպես կոռուպցիոն երևույթ կամ՝ պարտադրված դպրոցի աշխատակազմի կողմից: Նվերների գերակշիռ մասը իրականացվում են կոլեկտիվ կերպով, ինչը հիմնականում պայմանավորված է տասնամյակներով ձևակերպված ավանդույթով:

Ուսումնասիրվել են դպրոցների 2013-2015թթ. կառավարման խորհուրդների նիստերի արձանագրությունները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արձանագրություններում շատ դեպքերում չեն նշվում անդամների բացակայության հարգելի կամ ոչ հարգելի լինելը, ինչը ենթադրում է խորհրդի անդամի լիազորությունների դադարեցում՝ մեկ տարվա ընթացքում երեք անհարգելի բացակայության դեպքում: Առանձին դպրոցներ ընդհանրապես չեն նշում խորհրդի

անդամների ներկայության մասին, մի մասն էլ նշում է բացակաների թիվը, առանց նշելու բացակայության հարգելի լինելը: Խորհրդի գրեթե բոլոր որոշումներն ընդունվում են միաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ տնօրենի ընտրությանը մասնակցում է մեկից ավել թեկնածու:

Կարևոր բացահայտումներից մեկն այն է, որ խորհրդի անդամ ծնողների զգալի մասը տեղյակ չէ, թե քանի հոգի է մասնակցում դպրոցի կառավարման խորհրդի նիստերին: Որպես տարբերակներ նշվել են 2, 3, 4, ինչի դեպքում նիստ պարզապես չէր կարող կայանալ քվորումի բացակայության պատճառով:

Դպրոցի ծնողական խորհուրդները, որոնք լիազորված են դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման հարցերում, չեն առնչվում ֆինանսական գործունեությանը, քանի որ դպրոցների արտաբյուջետային գործունեությունը գրեթե զրոյական է:

Ուսումնասիրության ընթացքում հնարավոր չեղավ հստակ բացահայտել որեւէ միասնական հարթակ, որտեղ հրապարակվում են դպրոցի ֆինանսական փաստաթղթերը: Նշվում էին տարբեր կայքեր, սակայն դրանցում այդ տվյալները չկային կամ լիարժեք չէին: Չնայած, որ սկսած 2017թ. ֆինանսական փաստաթղթերն արդեն հրապարակվում են www.schoolsite.am կայքում, այդուհանդերձ ոչ բոլոր դպրոցներն են ամբողջական և ժամանակին հրապարակում տվյալները: Բացի այդ հրապարակվող տվյալները հաճախ օգտագործման համար ընթեռնելի կամ հարմար չեն:

Ակնկալվում է, որ մոնիտորինգի արդյունքում բացահայտված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններն արձագանք կստանան Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) և այլ շահագրգիռ պետական մարմինների կողմից, ինչպես նաև դրանք կներառվեն 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող ՀՀ կրթության ոլորտի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրում:

Ներածություն

Հայաստանի մարզային դպրոցների ֆինանսական գործունեության մոնիտորինգն իրականացվել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի (ԺԱԱ) կողմից «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ-Հ) աջակցությամբ հիմնած Քաղաքացիական երիտասարդական կենտրոնների (ՔԵԿ) երիտասարդների մասնակցությամբ 2016թ. ընթացքում:

Մոնիտորինգի շրջանակներում տվյալների հավաքագրումն իրականացվել է փաստաթղթերի վերլուծության, տնօրենների և ծնողների հետ հարցումների միջոցով: Մոնիտորինգի մեթոդաբանությունը ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (ԿԳՆ) և քննարկվել է հանրակրթության վարչության մասնագետների հետ, ապա՝ մեթոդաբանության վերջնամշակման համար հաշվի են առնվել ԿԳՆ առաջարկությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցների գործունեության նկատմամբ առկա է հասարակական հետաքրքրություն, ինչպես նաև այն, որ դպրոցների ֆինանսական գործունեության արդյունքների հրապարակայնությունը կրում է անկանոն բնույթ, անհրաժեշտություն կար հետազոտության միջոցով հասկանալ, թե ինչպես են դպրոցներն իրականացնում ֆինանսական գործունեություն, ինչպես են գործում ֆինանսական գործունեության համար պատասխանատու դպրոցի կառավարման և ծնողական խորհուրդները:

Հանրակրթության ոլորտում Հայաստանում իրականացված առաջին բարեփոխումներից մեկը (1998-1999թթ.) դպրոցների ֆինանսավորման համակարգի փոփոխությունն էր: Անցում կատարվեց ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի և ձևավորվեցին դպրոցի կառավարման խորհուրդներ, որոնք ունեն առանցքային լիազորություններ դպրոցի ֆինանսական հոսքերի և ընդհանրապես դպրոցի կառավարման գործում: Կարևոր դեր ունեն նաև ծնողական խորհուրդները, որից երկու ներկայացուցիչ կառավարման խորհրդի անդամ է: Բացի այդ ծնողական խորհրդին է վերապահված նաև մասնակցությունը դպրոցի արտաբյուջետային միջոցների տնօրինմանը:

Զեկույցում ներկայացվում են Հայաստանի 10 մարզկենտրոնների 40 դպրոցների 2013-2015թթ. ֆինանսական գործունեության մոնիտորինգի արդյունքները: Փաստաթղթերի հավաքագրումն ու հարցումներն անցկացվել են ՔԵԿ-ի մոնիտորինգային խմբերի կողմից, որոնք ուսուցանվել են այդ աշխատանքները կատարելու համար: Մոնիտորինգի դաշտային աշխատանքներն իրականացվել են 2016թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում:

Զեկույցը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում ներկայացված են դպրոցների բյուջեի վերլուծությունը՝ ըստ եկամուտների և ծախսերի, երկրորդ գլխում ներկայացված են դպրոցի գործունեությանը ծնողների մասնակցության վերաբերյալ անցկացված հարցման արդյունքները: Երրորդ գլխում ներկայացված են դպրոցի կառավարման և ծնողական խորհուրդների գործունեությունը ֆինանսական ոլորտում:

Հայաստանի բոլոր մարզկենտրոններում զեկույցի նախնական բացահայտումների և առաջարկների վերաբերյալ կարծիքներ, դիտողություններ և առաջարկներ ստանալու նպատակով անցկացվել են քննարկումներ, որոնց մասնակցել են մարզպետարանների և քաղաքապետարանների պատասխանատուներ, դպրոցների տնօրեններ, փոխտնօրեններ, հաշվապահներ, ուսուցիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մոնիտորինգի դաշտային աշխատանքներն իրականացրած երիտասարդներ և տեղական ՁԼՄ ներկայացուցիչներ: Քննարկումների արդյունքում զեկույցը լրամշակվել և ներկայացվել է ԿԳՆ, որից ստացված կարծիքի հիման վրա զեկույցը վերջնամշակվել է հրապարակումից առաջ:

Մեթոդաբանություն

Հետազոտության նպատակը և մեթոդները

Սույն հետազոտության նպատակն էր ուսումնասիրել դպրոցների ֆինանսական գործունեությունը հետևյալ հետազոտական խնդիրների միջոցով.

1. ի՞նչ ծախսեր են կատարվել բյուջեից 2013-2015թթ. ՝ վերլուծելով առկա դինամիկան,
2. ի՞նչ լրացուցիչ եկամուտների ներգրավման հնարավորություններից են օգտվում դպրոցները,
3. ի՞նչ ազդեցություն է ունենում խորհրդով կառավարման համակարգը դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության վրա,
4. ինչպե՞ս են քննարկվում և ընդունվում ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող որոշումները դպրոցի կառավարման խորհրդում,
5. ինչպե՞ս է մասնակցում դպրոցի ծնողական խորհուրդը այդ որոշումների ընդունմանը,
6. որքանո՞վ են ծնողական խորհրդի անդամները տեղեկացված դպրոցի ֆինանսական գործունեությունից,
7. որքանո՞վ է դպրոցի ֆինանսական գործունեությունը թափանցիկ և հաշվետվողական:

Մոնիտորինգի շրջանակներում առաջադրված հարցերի ուսումնասիրության համար կիրառվել են տեղեկատվության հավաքագրման մի շարք մեթոդներ:

Փաստաթղթերի վերլուծություն

Ֆինանսական գործունեության առավել ամբողջական պատկեր ստանալու համար հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են թեմային առնչվող փաստաթղթերը.

- կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը (տես հավելված 1),
- 2013-2015թթ. դպրոցների ֆինանսական փաստաթղթերը,
- տարիֆիկացիոն և հաստիքային ցուցանիշներն ու տվյալները,
- դպրոցների կառավարման խորհրդի և ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունները:

Վերը նշյալ փաստաթղթերը տրամադրելու նպատակով ՔԵԿ-երի կողմից բոլոր ընտրված դպրոցների տնօրեններին ուղարկվել է տեղեկության հարցում (հավելված 5): Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են վերջին երեք ուսումնական տարիների բյուջեների կատարողականները, տարիֆիկացիոն և հաստիքային ցուցանիշներն ու տվյալները, դպրոցի խորհրդի, ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցներում աշակերտների շարժի, ֆինանսական անբավարար միջոցների կամ խնայողությունների արդյունքում դպրոցի խորհրդի կողմից եռամսյակը մեկ անգամ վերանայվում է դպրոցի բյուջեն, որպես հետազոտության հիմք վերցվել են բյուջեների կատարողականները: Ուսումնասիրվել են ընտրված 40 դպրոցներից 39-ի ֆինանսական փաստաթղթերը, քանի որ դպրոցներից մեկը՝ Եղեգնաձորի ավագ դպրոցը (տնօրեն Կարինե Հարությունյան) տրամադրել է ոչ լիարժեք տեղեկատվություն, ինչի պատճառով այդ դպրոցը չի դիտարկվել ֆինանսական փաստաթղթերի և տարիֆիկացիոն ցուցանիշների առումով:

Կիսաձևայնացված, անհատական հարցազրույցներ

Կիսաձևայնացված հարցաթերթիկների միջոցով իրականացվել են հարցազրույցներ.

- դպրոցների տնօրենների հետ
- ծնողական և կառավարման խորհուրդների անդամ ծնողների շրջանում
- խորհուրդներում չընդգրկված ծնողների շրջանում:

Անցկացվել է հարցում, որին մասնակցել է դպրոցի 40 տնօրեն, որոնցից 30-ը՝ հիմնական դպրոցի տնօրեն, իսկ 10-ը՝ ավագ: Անցկացվել է նաև հարցում դպրոցի կառավարման խորհրդի անդամ ծնողների շրջանում: Հետազոտության շրջանակներում կազմվել է երկու հարցաթերթ

(հավելված 4), որոնց միջոցով համապատասխան տեղեկատվություն է ստացվել դպրոցների տնօրեններից և ծնողներից:

Սույն ծրագրի շրջանակներում մշակված մեթոդաբանությունը և մոնիտորինգի գործիքակազմը հնարավորություն են տալիս պարբերաբար իրականացնել նմանատիպ հետազոտություններ և, համեմատելով ստացված արդյունքները, գնահատել իրավիճակի փոփոխության դինամիկան: Հետազոտության մեթոդաբանությունը արտացոլվում է հարցաթերթերի և հետազոտության ընտրանքի մեջ:

Տվյալ հետազոտության համատեքստում ընտրանքը իրենից ներկայացնում է հարցմանը մասնակից ծնողների ընտրության սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել ստացված պատասխանները ընդհանրացնել գլխավոր համախմբության համար:

Հետազոտության ընտրանքը, գործիքները և վերլուծության սկզբունքները

Հետազոտության ընտրանքը

Տվյալ հետազոտությունն անցկացվել է Հայաստանի 10 մարզկենտրոնների 40 դպրոցներում: Յուրաքանչյուր մարզկենտրոնում ընտրվել է 4 դպրոց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղեգնաձոր քաղաքում գործում է ընդամենը 3 դպրոց, մոնիտորինգում ներգրավվել է նաև հարևան Վայք քաղաքի հիմնական դպրոցը: Բոլոր մարզերում ընտրված 4 դպրոցներից մեկն ավագ դպրոց է, մյուս երեքը՝ հիմնական: Ընտրված դպրոցներից առնվազն մեկն իրականացնում է ներառական կրթություն: Ընտրվել են 100-300 աշակերտ ունեցող դպրոցներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ դպրոցները ֆինանսավորվում են նույն բանաձևով: Սակայն հաշվի առնելով, որ որոշ քաղաքներում դպրոցների թիվը սահմանափակ է կամ գործում է մեկ ավագ դպրոց, մեկ ներառական դպրոց, որոշ դեպքերում այլընտրանք չլինելու հիմնավորմամբ, ընդգրկվել են 300-ից ավել աշակերտներ ունեցող դպրոցներ (հավելված 2):

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքն ըստ մարզերի

	Մարզ	Բնակավայր	Դպրոցների թիվը	Հարցված ծնողների թիվը
1	Արարատ	Արտաշատ	4	40
2	Լոռի	Վանաձոր	4	40
3	Արմավիր	Արմավիր	4	40
4	Արագածոտն	Աշտարակ	4	30
5	Սյունիք	Կապան	4	40
6	Վայոց Ձոր	Եղեգնաձոր	3	30
7	Վայոց Ձոր	Վայք	1	10
8	Կոտայք	Հրազդան	4	40
9	Տավուշ	Իջևան	4	40
10	Գեղարքունիք	Գավառ	4	40
11	Շիրակ	Գյումրի	4	40
Ընդամենը			**40**	**390**

Յուրաքանչյուր մարզում հարցվել է 40 ծնող, բացառությամբ Արագածոտնի մարզի, որտեղ մասնակցել է 30 ծնող: Հետազոտության արդյունքները վիճակագրական ներկայացուցչականությունը պայմանական է, քանի որ չեն պահպանվել ՀՀ և մարզային մակարդակներով կրթական հաստատությունների և առկա ծնողների համամասնությունը: Դպրոցի շրջանակներում ծնողների ընտրությունը կատարվել է պատահական ընտրանքի միջոցով (հավելված 3): Հաշվի առնելով, որ ընտրանքը թիրախային է և պարունակում է կլաստերային ընտրանքի տարրեր, այնուամենայնիվ կարելի է պայմանականորեն սահմանել ընտրանքի վիճակագրական սխալը:

Հետազոտության ընտրանքային սխալը 95% վստահության միջակայքի դեպքում կազմում է 4,91%, ինչը ցույց է տալիս այն հավանականությունը, ըստ որի նշված ընտրանքը

կիամապատասխանի գլխավոր համախմբությանը: Ընտրանքային սխալը հաշվարկվել է նաև ընտրանքային ենթախմբերի մակարդակներով՝ մասնավորապես 1-4-րդ դասարանցիների ծնողների թիվը եղել է 115 հոգի, իսկ 5-12-րդ դասարանցիների թիվը՝ 275: Համապատասխանաբար՝ ընտրանքային սխալը 9,11% է 1-ին ենթախմբի դեպքում և 5,87%՝ 2-րդ ենթախմբի դեպքում:

Հարցաթերթերի կառուցվածքը

Հարցաթերթերի կառուցվածքը հիմնված է հետազոտության մեթոդաբանության վրա: Ծնողների հարցաթերթը բաղկացած է հարցերի 4 հիմնական խմբերից/բլոկներից (հավելված 4)՝

1. *Ժողովրդագրական հարցեր,* որոնք նկարագրում են ծնողի սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրիչները, մասնավորապես դպրոցական երեխաների թիվը, բնակության վայրը, դասարաններում աշակերտների թիվը, երեխայի տարիքը և դասարանը,
2. *Ընդհանուր հարցեր,* որոնք վերաբերում են կազմակերպչական, ֆինանսական, կրթական խնդիրներին և դասագրքերին,
3. *Դպրոցի ծնողական խորհրդի անդամների համար նախատեսված հարցեր,*
4. *Դպրոցի կառավարման խորհրդի անդամ ծնողների համար նախատեսված հարցեր:*

Հետազոտության տեղեկատվության հավաքման մեթոդը

Տեղեկատվությունը հավաքվել է դեմ առ դեմ հարցման մեթոդով, ընդ որում հարցաթերթերի հարցերի մեծամասնությունը փակ և կիսափակ հարցեր են, ինչը հնարավորություն է տալիս ստանդարտացնել պատասխանները: Հարցումներն իրականացվել են ԺԱԱ և ԹԻՀԿ փորձագիտական աջակցության շնորհիվ:

Հետազոտության վերլուծության սկզբունքները

Հետազոտության վերլուծության ժամանակ պահպանվել են սոցիոլոգիական հետազոտությունների առանցքային սկզբունքները.

- ✓ Տվյալների անանունության պահպանումը՝ արդյունքները ներկայացվել են միայն ընդհանրացված տեսքով, տվյալների բազայում նշված չեն մասնակիցների անունները և այնպիսի տեղեկատվություն, որը կարող է բացահայտել նրանց ինքնությունը:
- ✓ Հետազոտության արդյունքների մեթոդաբանությունը հիմնված է բացառապես գիտական սկզբունքների վրա, անաչառ է:
- ✓ Հետազոտության մեթոդաբանությունը և վերլուծությունը կառուցված են այնպես, որ հնարավորություն են տալիս միևնույն հարցաթերթի և ընտրանքի կիրառության շնորհիվ ստանալ համադրելի պատասխաններ:

Հետազոտության սահմանափակումները

Հետազոտության ընթացքում առաջացած հիմնական խնդիրը վերաբերում է ֆինանսական փաստաթղթերի ձեռք բերմանն ու ծնողների շրջանում հարցումների իրականացմանը: Մասնավորապես, Եղեգնաձորի ավագ դպրոցի տնօրենը չի տրամադրել ֆինանսական փաստաթղթերի պատճենները, փոխարենը մեծ դժվարությամբ ու մեծ ջանքերից հետո ներկայացնելով ընդհանրացված հակիրճ տվյալներ, որոնք վերլուծության համար պիտանի չեն գտնվել: Դպրոցի տնօրեն Կարինե Հարությունյանը սկզբունքորեն հրաժարվել է համագործակցել այս հետազոտության շրջանակներում, չնայած այն հանգամանքին, որ մոնիտորինգը համաձայնեցված է եղել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ, օրենսդրությամբ նախատեսված կարգով գրավոր հարցում է ստացել տեղեկությունների տրամադրման խնդրանքով, իսկ ծրագրի պատասխանատուի այցելությունների ժամանակ չի կամեցել կամ չի կարողացել ողջամիտ բացատրություններ տալ, թե ինչով է պայմանավորված

համագործակցությունից իր հրաժարումը: Խնդիր է առաջացել նաև Արագածոտնի մարզի դպրոցների ծնողների մասնակցության առումով: Արդյունքում, վերլուծվել է 39 դպրոցի ֆինանսական տվյալները և Աշտարակում նախատեսված 40 ծնողի փոխարեն հարցմանը մասնակցել է 30 ծնող:

Հետազոտության սահմանափակումներից է նաև ֆինանսական փաստաթղթերում ծախսերի և եկամուտների ընդհանրական ներկայացվածությունը, ինչը հնարավորություն չի տվել դրանք ավելի մանրակրկիտ ուսումնասիրելու համար: Օրինակ, դպրոցների ֆինանսական փաստաթղթերում նշված են վարձակալությունից ստացված եկամուտներ, սակայն մասնավորեցված չէ վարձակալության առարկան և այլն:

Ուսումնասիրության էական սահմանափակումներից է նաև այն, որ հնարավոր չէր պարզել՝ արդյոք կառավարման խորհրդի կամ ծնողական խորհրդի նիստերն իսկապես կայացել են և քննարկվել են արձանագրված հարցերը, թե պարզապես կազմվել է արձանագրություն և ստորագրվել խորհուրդների նախագահների կողմից:

ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Իրավական կարգավորումներ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի[1] 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: Ուսումնական հաստատության ֆինանսավորումը պետական բյուջեից ըստ իրականացվող կրթական ծրագրերի՝ կախված է սովորողների թվից:

Նույն հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով՝

1. իրականացնելու հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար,
2. իրականացնելու ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր,
3. կազմակերպելու դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ,
4. ստեղծելու ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ ստանալ լրացուցիչ ֆինանսավորում նաև այլ նպատակներով:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունը կարող է զբաղվել նաև ձեռնարկատիրական գործունեությամբ միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով ուսումնական հաստատությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա: Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները, բարեգործական նպատակային ներդրումները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները, ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները[2]:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրության (այսուհետ՝ օրինակելի կանոնադրություն) մեջ ամրագրված է ձեռնարկատիրական 5 տեսակի գործունեություն իրականացնելու հնարավորությունը.

1. լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
2. համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում.
3. ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.
4. արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
5. սովորողների սննդի կազմակերպում[3]:

Դպրոցների ֆինանսավորման գործող բանաձևը սահմանված է ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N1262-Ն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու մասին» որոշմամբ[4]: Բանաձևի առանցքային փոփոխականը դպրոցում սովորող աշակերտների թիվն է: Բացի

---

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

[2] ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն, 7-րդ բաժնի 142-րդ կետ

[3] Նույն տեղում, 2-րդ բաժնի 15-րդ կետ

[4] ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N1262-Ն որոշում

աշակերտների թվից բանաձևում ներառված է նաև պահպանման ծախսը, սոցիալապես անապահով երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման գումարը, տարրական դասարանների և նախակրթարանների սովորողների սննդի գումարը: Ներկայիս բանաձևը չի ապահովում փոքր, թերկոմպլեկտավորված դպրոցների նվազագույն կարիքներին համապատասխան ֆինանսավորում: Հիմնվելով այդ որոշման վրա, ՀՀ ֆինանսների նախարարը և կրթության և գիտության նախարարը ամեն տարի ստորագրում են համատեղ հրաման ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին: Ներկայումս քննարկման փուլում է ֆինանսավորման նոր բանաձևը, որի համաձայն առաջարկվում է դպրոցների ֆինանսավորման բանաձևում նախատեսել նաև նոր փոփոխական՝ դասարանների թիվը: Նախատեսվում է նաև վերացնել գումարների վերաբաշխման հնարավորությունը և սահմանել ուսուցչի նվազագույն աշխատավարձ:

1.1 Եկամուտների վերլուծություն

Եկամուտների ընդհանրական վերլուծություն

Դպրոցների ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրությունը[5], տնօրենների և կառավարման խորհրդի անդամ ծնողների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ դպրոցները գերազանցապես ֆինանսավորվում են պետական բյուջեից: Վերջին երեք տարում որևէ այլ աղբյուրից ֆինանսավորում ստացած դպրոցների թիվը շատ փոքր է: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 2. Այլ աղբյուրից ստացած ֆինանսավորումն ըստ նպատակի

Այլ աղբյուրից ստացած ֆինանսավորման տեսակները 2013-2015թթ.	Դպրոցների թիվը՝ ուսումնասիրված 39-ից
Բարեգործական աջակցություն	11
Վարձակալություն	7
Մրցութային հիմունքներով լրացուցիչ ֆինանսավորում պետական բյուջեից	6
ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների նվիրատվություն	4
Վճարովի կրթական ծառայություն	2
Ուսումնաարտադրական գործունեության ծավալումից և արտադրանքի իրացումից	2

Եթե հաշվի առնենք, որ այս եկամուտները դպրոցները ստացել են ոչ թե մեկ ուսումնական տարում, այլ երեք, ապա միայն բարեգործական աջակցությունն է որոշակի կշիռ կազմում: Դպրոցների զարգացմանը միտված լրացուցիչ ծառայություններ մատուցելու հնարավորությունն, ըստ էության, գրեթե չի օգտագործվում: Դպրոցների անցումը մարզային ենթակայության և խորհուրդներով կառավարման, ենթադրում էր, որ դպրոցները պետք է լրացուցիչ ծառայություններ մատուցելու միջոցով ապահովեն լրացուցիչ եկամուտներ:

Մարզային քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցները շահագրգռված չեն այլ աղբյուրներից եկամուտներ ստանալու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու: Պատճառներից մեկն այն է, որ ՀՀ կառավարության 2006թ. N1262 որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների» կարգը հնարավորություն է տալիս լիազոր մարմնին դպրոցին՝ չհատկացնել ֆինանսավորման բանաձևով հասանելիք գումարը: Լիազոր մարմինը որոշ դպրոցներին հասանելիք գումարը տալիս է այն դպրոցներին, որոնք ֆինանսավորման բանաձևով չեն կարող ապահովել իրենց բնականոն գործունեությունը: Հետևաբար, դպրոցի տնօրենը ոչ մի շահագրգռվածություն չունի լրացուցիչ եկամուտներ ապահովելու հարցում: Մինչդեռ, ըստ

[5] Ուսումնասիրվել են դպրոցների տարիֆիկացիոն ձևաթղթի մատյանները, խորհրդի արձանագրությունները, տարեկան բյուջեի կատարողականները

աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի ներդրման հիմնական նպատակը շատ աշակերտներ ունեցող, հետևաբար բարձր ֆինանսավորում ապահովող դպրոցներին մոտիվացնելն էր:

Թեև դպրոցի օրինակելի կանոնադրությունը դպրոցին հնարավորություն է տալիս իրականացնել սովորողների սննդի կազմակերպում, բայց շատ դպրոցներ նշում են, որ իրենց այդ հարցում ազատություն չի տրվում: Առանձին քաղաքներում բոլոր դպրոցներին պարտադրվում է պայմանագիր ստորագրել միևնույն կազմակերպության հետ: Որոշ քաղաքներում էլ դպրոցին տրված է ազատություն, բայց դպրոցը չի ցանկանում օգտվել այդ հնարավորությունից, քանի որ լրացուցիչ գումար վաստակելու շահագրգռվածություն չունի:

Վարձակալություն

Ուսումնասիրված 39 դպրոցից 7-ի ֆինանսական փաստաթղթերում առկա է վարձակալությունից ստացված չնչին եկամուտ՝ տարեկան 30-60 հազար դրամի սահմաններում: Վարձակալության միջոցով լրացուցիչ եկամուտներ ունենալու կարգը դպրոցներին չի մոտիվացնում, քանի որ այդ դեպքում վարձակալը պայմանագիրը կնքում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ և դպրոցը ուղիղ ոչինչ չի ստանում: Միայն մինչև մեկ տարվա վարձակալության դեպքում դպրոցներն ունեն ինքնավարություն: Դպրոցի օրինակելի կանոնադրության 125-րդ կետի համաձայն, հանրակրթական դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից՝ լիազորված մարմնի գրավոր համաձայնությամբ, հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրակցված գույքի օգտագործման արդյունքում դպրոցի ստացած եկամուտները դպրոցի սեփականությունն են:

Մարզային քննարկումների ժամանակ մտահոգություններ հնչեցին այն մասին, որ գործող կարգը բարդություններ է ստեղծում դպրոցների համար: Դպրոցների ղեկավարների հետ քննարկումների ժամանակ բացահայտվեց, որ տնօրենները շահագրգռված չեն վարձակալության միջոցով լրացուցիչ միջոցներ ներգրավելու, պնդելով, թե վարձակալության գումարը փոխանցվում է կամ ՀՀ Պետական գույքի կառավարման վարչություն (ինչը թյուր ընկալում է) կամ դպրոցին, բայց վերջինիս դեպքում դա համարվում է լրացուցիչ եկամուտ, ինչի արդյունքում կարող է վերաբաշխման միջոցով կրճատվել դպրոցին բյուջեից հատկացվող գումարը: Իրականում, երկու տարբերակն էլ հնարավոր են: Եթե վարձակալության պայմանագիրը կնքում է դպրոցը, ապա եկամուտը մուտքագրվում է դպրոցի բյուջե: Եթե պայմանագիրը կնքում է Պետական գույքի կառավարման վարչությունը, ապա գումարը գնում է պետական բյուջե:

Մարզպետարանի կողմից պետական բյուջեից ստացված գումարի վերաբաշխումների արդյունքում փոքր դպրոցները ստանում են գումարներ, որպեսզի կարողանան իրենց բնականոն գործունեությունն իրականացնել: Արդյունքում, փոքր դպրոցներում մեկ աշակերտի համար ծախսվող գումարները հաճախ հասնում են աստղաբաշխական թվերի: Օրինակ՝ Հայաստանում կա երկու աշակերտ ունեցող դպրոց, որի տարեկան բյուջեն շուրջ 29 միլիոն դրամ է: Այսինքն՝ 1 աշակերտի տարեկան կրթությունն արժե 14,5 միլիոն դրամ: Մարզային քննարկումների ժամանակ հնչեցին հակասական կարծիքներ: Որոշ մարզերում նշվում էր, որ վերաբաշխումներից տուժում են փոքր դպրոցները, մյուսներում խոսվում էր, որ մեծ դպրոցներն են տուժում:

1.2 Ծախսերի վերլուծություն

Ծախսերի ընդհանրական վերլուծություն

Բյուջեի կատարողականների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2013-2015թթ. ընթացքում մոնիտորինգի ենթարկված 39 դպրոցների ծախսը կազմել է 7.479.673,8 հազար դրամ, որից 5.468.755,4 հազար դրամը ծախսվել է մոնիտորինգի ենթարկված 30 հիմնական դպրոցների կողմից, իսկ 2.010.918,4 հազար դրամը՝ մոնիտորինգի ենթարկված 9

ավագ դպրոցների կողմից: Ծախսի 91,4 %-ը եղել են աշխատավարձերը և դրան հավասարեցված գումարները (ներառյալ՝ պարգևավճարները): Ըստ դպրոցների տեսակների, միջին բաշխումը երեք տարիների համար հետևյալն է. ավագ դպրոցները ծախսի 92,9%-ը հատկացրել են աշխատավարձին, իսկ հիմնական դպրոցները՝ 90,7%-ը:

Դիտարկված դպրոցների բյուջեներում ուսումնասիրվել են հետևյալ ծախսերը.

Աղյուսակ 3. Ուսումնասիրված ծախսերը և դրանց միջինացված մասնաբաժինը բյուջեում

Ծախսը	Մասնաբաժին (%-ով)
Աշխատավարձ	91,40%
Ձեռուցում	5,00%
Կոմունալ վճարումներ (Էլեկտրաէներգիա, աղբահանություն, ջուր)	1,30%
Մասնագիտական զարգացում	0,07%
Գույք և սարքավորումներ	0,65%
Նյութերի ձեռքբերումներ	0,87%
Ընթացիկ նորոգումներ	0,30%
Այլ ծախսեր	0,41%

Ֆինանսավորման էական անկում է արձանագրվել ավագ դպրոցներում: 2013թ. համեմատ 2015թ. ավագ դպրոցների ծախսերը նվազել են 13,3%-ով: Նույն ժամանակահատվածում հիմնական դպրոցների ծախսերն աճել են 17%-ով: Այս հանգամանքը պայմանավորված է այն իրողությամբ, որ 12-ամյա կրթության անցնելու կապակցությամբ ներկայումս, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 11-րդ դասարանում սովորում են քիչ թվով աշակերտներ: Երբ 2015թ. այդ դասարանն ավարտեց 9-րդ դասարանը, հիմնական դպրոցների ֆինանսական վիճակը սկսեց բարելավվել, իսկ ավագ դպրոցներինը՝ վատթարանալ: Բացի այդ ավագ դպրոցներում աստիճանաբար նվազել են միջին դասարանները, քանի որ այդ դպրոցները 10-րդ դասարանից ցածր ընդունելություն չեն կարող անել:

Աշխատավարձ

Ուսումնասիրված դպրոցներում ԿԳ նախարարի հրամանով հաստատված հաստիքացուցակի նորմերի խախտումներ չեն արձանագրվել[6]: Այսինքն՝ դպրոցները պահպանում են իրենց հասանելիք հաստիքների քանակը: Հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության համաձայն՝ դպրոցի հաստիքացուցակը տնօրենի ներկայացմամբ հաստատում է կառավարման խորհուրդը՝ համաձայն մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրի[7]:

Դիտարկված ուսումնական հաստատությունների հաստիքները խմբավորված են հետևյալ խմբերում.

1. վարչական աշխատողներ, որը ներառում է դպրոցի տնօրենին և փոխտնօրեններին,
2. մանկավարժներ, որը ներառում է դպրոցի ուսուցիչներին,
3. մանկավարժական հաստիքներ, որը ներառում է զինղեկին, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին, հոգեբանին, սոցիալական մանկավարժին, լոգոպեդին և դպրոցի օրինակելի հաստիքացուցակով նախատեսվող այլ հարակից մասնագետների,
4. դաստիարակներ, որը ներառում է նախադպրոցական կրթություն իրականացնող մասնագետին,

[6] ՀՀ Կրթության և գիտության նախարարի «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ոչ ուսուցչական՝ վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի տիպային նվազագույն հաստիքների ցանկը և տնօրինման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» 2013թ. դեկտեմբերի 9-ի N1366 Ա/Ք հրաման

[7] ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն, կետեր 68, 46

5. ուսումնաօժանդակ աշխատողներ, որը ներառում է դպրոցի սպասարկող անձնակազմին,
6. հաշվապահ:

Հետազոտված դպրոցներից ստացված տվյալների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ աշխատավարձերի և հավելավճարների, պարգևավճարների հանրագումարի բաշխումն ըստ հաստիքացուցակի, հետևյալ համամասնությունն ունի:

Աղյուսակ 4. Դպրոցի աշխատավարձային ֆոնդի բաշխումն ըստ հաստիքների

Հաստիքներ	Աշխատավարձային ֆոնդի բաշխվածությունը
Մանկավարժներ	56 %
Ուսումնաօժանդակ անձնակազմ	23 %
Վարչական աշխատողներ	12 %
Մանկավարժական հաստիքներ	6 %
Հաշվապահ	2 %
Դաստիարակներ	Մինչև 1 %

Վարչական աշխատողների թիվը յուրաքանչյուր դպրոցում տատանվում է 2-6-ի միջակայքում, մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների պարագայում 3 է: Խնդիրներ կան մանկավարժների թվի և հատկացված դրույքների հետ: Մոնիտորինգի ենթարկված բոլոր դպրոցներում մանկավարժների թիվը շատ ավելին է, քան դրույքների թիվը: Օրինակ՝ մանկավարժի 13 դրույք ունեցող դպրոցում աշխատող մանկավարժների թիվը հասնում է 25-ի: Այսինքն՝ դպրոցներն ունեն մեծ թվով հավելյալ մանկավարժներ: Ըստ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) տվյալների, Հայաստանում առկա է ուսուցիչների 25 հազար դրույք, բայց ուսուցիչների թիվը 37 հազար է: Այսինքն՝ հանրապետական ցուցանիշով 1 դրույքի վրա միջին հաշվով աշխատում է մոտ 1,5 ուսուցիչ: Մոնիտորինգի ենթարկված դպրոցներում 1 դրույքի հաշվով աշխատող ուսուցիչների միջին թիվը 1,7 ուսուցիչ է: Այսինքն՝ հետազոտված դպրոցներում զբաղված ուսուցիչների պայմանական ավելցուկն ավելի շատ է, քան հանրապետությունում՝ միջին հաշվով: Ֆինանսական առումով դպրոցը դրանից չի տուժում, բայց թերբեռնված ուսուցիչների առկայությունը բացասական գործոն է:

> *«Տնօրենների աշխատավարձը բացարձակապես չի կապվում աշակերտների քանակի հետ: Հաճախ 2-3 աշակերտ և 300 աշակերտ ունեցող դպրոցների տնօրենները ստանում են նույն չափի աշխատավարձ»:*
>
> (մարզային քննարկման մասնակից)

Մարզային քննարկումների ժամանակ հարց բարձրացվեց մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների ուսումնաօժանդակ անձնակազմի հետ կապված: Մասնավորապես, այդ դպրոցները չեն կարող ունենալ բանվոր, տնտեսվար: Եվ հարց է առաջանում, թե ո՞վ պետք է կատարի բանվորի աշխատանքը: Ի՞նչ տրամաբանությամբ 250 աշակերտ ունեցող դպրոցին բանվոր պետք չէ, իսկ 301 աշակերտ ունեցողին պետք է:

Բավական մեծ տատանումներ կան տնօրենների աշխատավարձերի չափերի միջև: Ուսումնասիրված դպրոցներում տնօրենի նվազագույն աշխատավարձը 155 հազար դրամ է: Սակայն դպրոցի կառավարման խորհուրդը գումարի առկայության դեպքում կարող է

> *«Կա նաև հաստիքների վերանայման խնդիր: Օրինակ՝ դպրոցը չունի լաբորատորիա, բայց ունի լաբորանտ»:*
>
> (մարզային քննարկման մասնակից)

հավելավճար՝ սահմանել: Այս կապակցու-թյամբ մարզային քննարկումների ժամանակ հնչեցին տեսակետներ, թե հավելավճարի, պարգևավճարի հետ կապված իրականում բոլոր հարցերի մասին որոշում կայացնում են մարզպետարանները: Դպրոցի խորհուրդը պարզապես ձևական կողմն է ապահովում: Ուսումնասիրված դպրոցներում տնօրենների աշխատավարձը տատանվում է 155-330 հազար դրամի սահմաններում: Այսինքն, էական տարբերություններ կան տարբեր դպրոցների տնօրեն-ների աշխատավարձերի չափերի միջև:

Հավելավճարներ, պարգևավճարներ

Դպրոցի օրինակելի կանոնադրության 48-րդ կետը տնօրենին հնարավորություն է ընձեռում խորհրդի հավանության ներկայացնել ծախսերի նախահաշիվը: Այս մոնիտորինգի արդյունքում պարզ դարձավ, որ տնօրենների ներկայաց-րած բոլոր նախահաշիվներն արժանացել են խորհրդի հավանությանը: Միաժամանակ, այդ նախահաշիվներներում հավելավճարներ սահմանվում են տնօրենների, փոխտնօրեն-ների, պահակների, հնոցապահների հաշվա-պահների համար: Ուսուցիչներին հավելա-վճարներ չեն տրվում:

Խորհրդի արձանագրությունների ու-սումնասիրությամբ պարզվել է, որ հավելա-վճարների հիմնավորումները ձևական բնույթ են կրում: Ուսումնասիրված որոշ դեպքերում առհասարակ հիմնավորումներ չկան, պարզապես նշված է, որ խորհուրդը որոշեց հավանություն տալ առաջարկին: Որպես հիմնական հիմնավորում նշվում է դպրոցի խնայողության առկայությունը:

«(...) հավելավճար տալ, քանի որ երկար ժամանակ աշխատավարձը չի բարձրացվել»:

«(...) հավելավճար տալ, քանի որ տնօրենը կամ աշխատակիցը լավ է աշխատել»:

«Առաջարկվում է տնօրենի աշխատավարձը բարձրացնել, քանի որ բյուջեում փող է ավելացել»:

«Առաջարկվում է (թվարկում-խմբ.) ուսուցիչներին պարգևավճար տալ, քանի որ դա կնպաստի կրթության որակի բարձրացմանը»:

(դպրոցների խորհրդի արձանագրություններից)

Ուսուցիչներին տրվում են պարգևավճարներ տարվա վերջում կամ պարգևավճարներ ծննդյան հոբելյանի (տարիքը կոնկրետ չի նշվում, հետևաբար չենք կարող ասել, որ տարիքն է հոբելյանական համարվում) դեպքում՝ ըստ տնօրենի որոշման: Հատուկ հոբելյաններ օրենսդրու-թյամբ սահմանված չեն: Ընդ որում, դպրոցի կառավարման խորհրդի արձանագրությունների ուսումնասիրության ժամանակ արձանագրվել է 8 դեպք, երբ պարգևավճարներ սահմանվել են ոչ բոլոր ուսուցիչների համար՝ առանց նշելու, թե ինչպես է կատարվել ընտրությունը: Մոնիտորինգի ենթարկված 40 դպրոցներից 9-ը պարգևատրել են բոլոր ուսուցիչներին՝ տարե-վերջին բյուջեում գումարի առկայության հիմնավորմամբ:

Այստեղ հիմնական խնդիրն այն է, որ հավելավճարը տրվում է լրացուցիչ աշխատանք կատարելու համար: Մինչդեռ խորհրդի արձանագրություններում չի երևում, թե ինչ հավելյալ աշխատանք են կատարում այն մարդիկ, ովքեր հավելավճար են ստանում:

Աղյուսակ 5. Աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներն՝ ըստ տարիների և դպրոցի տեսակի (%)

Աշխատավարձի մասնաբաժինը բյուջեում ըստ դպրոցի տեսակի (%)	2013թ.	2014թ.	2015թ.
Հիմնական դպրոց	91,7%	90,3%	90,3%
Ավագ դպրոց	94,4%	91,1%	93,2%
Ընդամենը	**92,5%**	**90,5%**	**91,0%**

Ջեռուցում

Աշխատավարձից հետո դպրոցի ջեռուցումը բյուջեի երկրորդ խոշոր ծախսն է, որն ուսումնասիրված դպրոցներում կազմել է միջին հաշվով 5%: Ուսումնասիրված տարիների ընթացքում արձանագրվել է գազի գնի աճ: Դրանով պայմանավորված 2014թ. արձանագրվել է ջեռուցման ծախսերի աճ 2013թ. համեմատ: Սակայն 2015թ. ջեռուցման ծախսերը նվազել են, ինչպես ավագ, այնպես էլ հիմնական դպրոցներում: Անկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ ուսումնական տարվա ընթացքում գրիպի համաճարակի պատճառով ձմեռային ամիսներին 2 շաբաթով դպրոցներում դադարեցվեցին դասերը:

> *«Դպրոցների ֆինանսավորման բանաձևում պետք է հաշվի առնել նաև դպրոցի աշխարհագրական դիրքը: Կան մարզեր, որտեղ եղանակը շատ ցուրտ է և մոտ մեկ ամիս ավել են ջեռուցվում այդ դպրոցները: Առաջարկում եմ գործակից սահմանել ցուրտ գոտիներում գտնվող դպրոցների համար»:*
>
> (մարզային քննարկման մասնակից)

Աղյուսակ 6. Ջեռուցման ծախսերն ըստ տարիների և դպրոցների տեսակների (հազ. դրամ)

	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը
Հիմնական դպրոց	89.315,1	105.226,1	94.240,2	288.781,4
Ավագ դպրոց	29.039,2	32.571,6	24.539,0	86.149,8
Ընդամենը	**118.354,3**	**137.797,7**	**118.779,2**	**374.931,2**

Մասնագիտական զարգացման ծախսեր

Դպրոցի բյուջեում չափազանց փոքր են մասնագիտական զարգացմանը հատկացվող ֆինանսական միջոցները: Մոնիտորինգի ենթարկված դպրոցները վերջին երեք տարվա ընթացքում ընդամենը 5.350,4 հազար դրամ են ծախսել մասնագիտական զարգացման վրա: Ընդ որում, ավագ դպրոցները վերջին երեք տարիներին ծախսել են մոտավորապես նույն գումարը, իսկ հիմնական դպրոցները կրկնապատկել են բյուջեից մասնագիտական զարգացմանը հատկացվող գումարը:

Աղյուսակ 7. Մասնագիտական զարգացման ծախսերն ըստ տարիների և դպրոցների տեսակների (հազ. դրամ)

	2013 թ.	2014 թ.	2015 թ.	Ընդամենը
Հիմնական դպրոց	651,1	1.049,3	1.827,2	3.527,6
Ավագ դպրոց	597,9	618,4	606,5	1.822,8
Ընդամենը	**1.249,0**	**1.667.7**	**2.433,7**	**5.350,4**

Թեև մասնագիտական զարգացմանը հատկացված գումարներն աճել են, դրանք անհամաչափ են բաշխված: Մոնիտորինգի ենթարկված 39 դպրոցներից 15-ը երեք տարվա ընթացքում որևէ ծախս չեն կատարել աշխատողների մասնագիտական զարգացման ուղղությամբ: Միայն Գավառի և Կապանի բոլոր ուսումնասիրված դպրոցներն են գումարներ հատկացրել մասնագիտական զարգացմանը: Առավելագույն գումար հատկացրած դպրոցը մասնագիտական զարգացման համար 3 տարում ծախսել է 980 հազար դրամ,

> *«Անընդհատ օրենքներ և կարգեր են փոխվում, բայց դպրոցների հաշվապահները վերապատրաստվելու հնարավորություն չունեն»:*
>
> (մարզային քննարկման մասնակից)

նվազագույնը՝ 14 հազար դրամ: Գյումրուց, Վանաձորից և Իջևանից մեկական դպրոց վերջին երեք տարում ընդհանրապես գումար չեն հատկացրել աշխատողների մասնագիտական զարգացմանը:

Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման համար նախատեսվում են պարտադիր վերապատրաստումներ ատեստավորման նպատակով 5 տարին մեկ անգամ: Բայց դպրոցի մնացած աշխատողների համար չկան պարտադիր վերապատրաստման պահանջ-ներ: Արդյունքում, դպրոցների վարչական և տեխնիկական անձնակազմը կանոնավոր չի վերապատրաստվում: Ավելին, դպրոցները մանկավարժների նպատակային վերապատրաստումների համար վճարելու հնարավորություն չունեն: Օրինակ՝ ատեստավորմանը նախորդող վերապատրաստումները միշտ չէ, որ բավարարում են կոնկրետ ուսուցչի կամ դպրոցի կարիքը:

Ընթացիկ նորոգումներ

Մոնիտորինգի ենթարկված 39 դպրոցներում վերջին երկու տարում կրկնապատկվել են ընթացիկ նորոգումների վրա ծախսված գումարները: Սակայն դպրոցներից 18-ը երեք տարվա ընթացքում գումար չի ծախսել ընթացիկ նորոգումների համար: Հատկապես մտահոգիչ է ավագ դպրոցների վիճակը: 9 ավագ դպրոցներից 8-ը գումար չի ծախսել ընթացիկ նորոգումների համար, թեև ուսումնասիրված ավագ դպրոցներից մի քանիսը շենքային վատ պայմաններ ունեն: Ընդամենը մեկ ավագ դպրոց 2013թ. 51 հազար դրամի ծախս է կատարել ընթացիկ նորոգման համար: Հիմնական դպրոցները կատարել են ավելի քան 22 մլն դրամի ընթացիկ նորոգումների ծախս: Երեք տարվա ընթացքում դպրոցներից 8-ն են 1 մլն դրամից ավել հատկացրել ընթացիկ նորոգումների վրա: Վանաձորը միակ մարզկենտրոնն է, որտեղ հետազոտված դպրոցները 3 տարվա ընթացքում գումար չեն ծախսել ընթացիկ նորոգումների համար:

Աղյուսակ 8. Ընթացիկ նորոգման ծախսերն ըստ տարիների (հազ. դրամ)

	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը
Ընթացիկ նորոգում	4.385,7	8.902,9	8.960,4	22.249,0

Կոմունալ վճարումներ

Կոմունալ վճարումները ներառում են էլեկտրաէներգիայի, ջրի, աղբահանության համար կատարվող մուծումները: Մոնիտորինգի ենթարկված դպրոցների բյուջեում այն միջին հաշվով եղել է 1,3%: Վերջին տարիների ընթացքում կոմունալ ծախսերը կայուն ձևով աճել են և 2015թ. ընդհանուր եղել են ավելի քան 36 մլն դրամ (1,5%):

Աղյուսակ 9. Կոմունալ վճարումներն ըստ տարիների (հազ. դրամ)

	2013 թ.	2014 թ.	2015 թ.	Ընդամենը
Կոմունալ վճարումներ	28.280,1	32.389,3	36.193,5	96.862,9

Գույքի և սարքավորումների ձեռքբերում

Գույք և սարքավորումներ ձեռքբերելու համար դպրոցները 3 տարվա ընթացքում կատարել են ծախս 48.435,1 հազար դրամի չափով: Գույքի և սարքավորումների համար 2014թ. կատարված ծախսը 64%-ով աճել է 2013թ. համեմատությամբ, բայց 2015թ. նվազել է 20%-ով՝ 2014թ. համեմատ: Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսը դպրոցների միջև անհավասարություն ստեղծող ծախսերից մեկն է: Ուսումնասիրվածներից 13 դպրոց, որից 6-ը ավագ, 3 տարվա ընթացքում գույքի և սարքավորումների ծախս ընդհանրապես չեն կատարել: Հատկապես քիչ են ծախսել Վանաձորի և Գյումրու դպրոցները: Վանաձորի ոչ մի հետազոտված դպրոց գույք և սարքավորում ձեռք չի բերել, իսկ Գյումրիում ուսումնասիրված 4-ից 3-ը որևէ գույք չի գնել: Ուսումնասիրվածներից 10 դպրոց 1-3 մլն դրամի ծախս է կատարել այդ նպատակով, իսկ 5-ը՝ 3 մլն դրամից ավել գումար են ծախսել գույք և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

Նյութերի ձեռքբերում

Այս հոդվածի մեջ մտնում են դպրոցների կողմից կատարվող գրասենյակային պարագաների և տնտեսական ապրանքների գնումները: Մոնիտորինգի ենթարկված դպրոցները երեք տարվա ընթացքում ձեռք են բերել 64.806,8 հազար դրամի գույք: Ընդ որում, այդ գումարի գրեթե կեսը՝ 31.451,5 հազար դրամ, ծախսվել է 2015թ.: Նման ծախսը պայմանավորված է դպրոցներում սննդի ծրագրերի ներդրմամբ, ինչը ենթադրում է տնտեսական պարագաների ձեռքբերում: Այդուհանդերձ, 4 դպրոց, որից 3-ը Վանաձորից, նյութերի ձեռքբերում չի կատարել: Չի բացառվում, որ այդ դպրոցները նման ծախսեր կատարել են այլ ծախսերի հոդվածով:

Տարիֆիկացիոն ցուցանիշներ

Դպրոցի տարիֆիկացիոն ցուցանիշները, որոնք բոլորն էլ՝ կախված դպրոցի ենթակայությունից, հաստատված են մարզպետների կամ ԿԳ նախարարի կողմից, դպրոցների մեծ մասի կողմից (31 դպրոց) թերի են լրացված: Մասնավորապես, միայն 13 դպրոցներ են նշում, թե ուսումնական տարվա ընթացքում քանի օր է ջեռուցվել դպրոցը: Ուշագրավ է, որ կան դպրոցներ, որոնք չափազանցված տվյալներ են ներկայացնում: Օրինակ՝ մոնիտորինգի ենթարկված 5 դպրոցներ իրենց ֆինանսական փաստաթղթերում նշում են, որ ուսումնական տարվա ընթացքում 180-185 օր դպրոցը ջեռուցել են: Այդ դպրոցները Սյունիքի, Արարատի, Կոտայքի մարզի դպրոցներ են:

Դպրոցների տնօրեններից 24-ը դիմել է կառավարման խորհրդին բյուջեի վերահաշվարկներ կատարելու խնդրանքով: Դա պայմանավորված է եղել աշակերտների թվի փոփոխությամբ, ինչը հանգեցրել է կամ դպրոցի բյուջեի ավելացման կամ նվազման: Ավելացման դեպքում առաջարկվել է գումարն ուղղորդել տնօրենի աշխատավարձի բարձրացմանը կամ պարգևավճարների: Նվազման դեպքում, դպրոցները լրացուցիչ ֆինանսական աջակցություն են ստացել մարզպետարանից: Երեք դպրոց ստացել են պետական սուբսիդիա:

Մոնիտորինգի և մարզային քննարկումների արդյունքում պարզվեց, որ չկան ծախսերի առաջնահերթություններ: Օրինակ՝ պարզ չէ, թե ինչի համար պետք է առաջնահերթ ծախսի իր գումարները դպրոցը: Օրինակ՝ դպրոցը չունի լաբորատոր սարքեր, բայց վերանորոգում է ուսուցչանոցը, ֆիզկուլտուրայի դահլիճը շատ վատ վիճակում է, բայց գումար է ծախսում դրսի խաղահրապարակի վրա:

Դպրոցներն, ունենալով սահմանափակ ռեսուրսներ, կատարում են բազմաթիվ ավելորդ ծախսեր: Օրինակ՝ տնօրենի մրցույթի կամ ուսուցչի թափուր տեղերի համար վճարվում են գումարներ azdarar.am կայքին և թերթերին: Եթե մրցույթը չի կայանում կամ հաղթող չի լինում, ապա դպրոցը ստիպված է նորից ծախսեր կատարել: Էլեկտրոնային դարաշրջանում միանգամայն հնարավոր է այդ հայտարարություններն անվճար տեղադրել դպրոցների կայքում կամ կրթական պորտալում: Մարզային քննարկումների ժամանակ նաև նշվեց, որ տարբեր ծառայություններից տեսուչներ են հաճախում դպրոցներ և պահանջում վճարումներ կատարել: Մինչդեռ դպրոցների բյուջեում նման ծախսեր ընդհանրապես նախատեսված չեն:

> *«Ես չեմ ուզում արտաբյուջետային հաշիվ ունենալ: Դա գլխացավանք է: Ժամանակին որոշ դպրոցներ ունեցել են: Եթե արտաբյուջետային հաշիվ ենք ունենում, հայտնվում ենք հարկային տեսչության ուշադրության կենտրոնում:»:*
>
> (մարզային քննարկման մասնակից)

Դպրոցներն ընդհանրապես շահագրգռված չեն նաև արտաբյուջետային հաշիվ ունենալու հարցում:

ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Իրավական կարգավորումներ

Ծնողական խորհրդի մասնակցությունը դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությանը ամրագրված է մի քանի իրավական փաստաթղթերում:

Այսպես, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, այդ թվում՝ ծնողական խորհուրդ, որի ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ[8]:

Համաձայն դպրոցի օրինակելի կանոնադրության հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է[9]:

Ըստ դպրոցի օրինակելի կանոնադրության՝ ծնողական խորհուրդների հիմնական լիազորությունները ներառում են.

- դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժ-ների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկու-թյուններ,
- աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմա-կերպման գործում,
- ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին,
- լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները. դպրոցի և ծնողների միջև ամրապնդում է կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում ձևավորում է միասնական պահանջներ,
- ներգրավում է ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,
- օգնում է դպրոցին սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում,
- մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների,
- մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալուն,
- աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը,
- ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում,

[8] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, կետ 5

[9] ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն, կետ 96

- ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ,
- ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվության մասին[10]:

Ուսումնական հաստատության ֆինանսական գործընթացներին ծնողական խորհրդի մասնակցության հիմնական մեխանիզմը այն է, որ իր կազմից առաջադրում է կառավարման խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում ծնողական խորհրդում փակ քվեարկությամբ՝ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն[11]:

Մինչև վերջերս ծնողական խորհուրդը դպրոցի օրինակելի կանոնադրության 101-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, կարող էր մասնակցել հանրակրթական դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին, որը ավելացվել էր օրինակելի կանոնադրության մեջ ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 15-ի N954-Ն որոշմամբ[12], իսկ ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի 801-Ն որոշմամբ հաստատված նոր օրինակելի կանոնադրությամբ այդ կետը վերացվել է[13]: Այսպիսով՝ ծնողական խորհուրդը զրկվել է վճարովի ծառայություններին կամ արտաբյուջետային միջոցների տնօրինման հարցերում իր ունեցած լիազորությունից, ինչն նվազեցնում է ծնողական հանրույթի կողմից դպրոցի կառավարմանը մասնակցելու մակարդակը:

2.1 Ծնողական խորհրդի տեղեկացվածությունը և մասնակցությունը դպրոցի գործունեությանը

Մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրված 40 դպրոցների ծնողական խորհրդի նիստերի արձանագրություններից ոչ մեկում չի հանդիպել գրառում վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների վերաբերյալ հարցերի քննարկման վերաբերյալ, չնայած որոշ դպրոցներ իրականացրել են որոշակի վճարովի ծառայություններ, կնքել են պայմանագրեր:

Ծնողական խորհրդի մասնակցությունը դպրոցի ֆինանսական գործունեությանը հիմնականում արտահայտվում է դասագրքերի վարձավճարներից ազատվող աշակերտների ցանկի հաստատմամբ: Սակայն մոնիտորինգի ենթարկված որոշ դպրոցներում այս հարցը որոշվում է կառավարման խորհրդում, որոշներում էլ ընդհանրապես բացակայում են ցանկի հաստատման վերաբերյալ տվյալներ:

Ծնողական խորհուրդների անդամների տեղեկացվածությունը դպրոցի գործունեության մասին

Մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրվել է ծնողական խորհուրդների անդամների տեղեկացվածությունը դպրոցի գործունեության մասին: Հետազոտության արդյունքները ներառում են դպրոցի գործունեության գրեթե բոլոր ուղղությունները: Ընտրանքի սահմանափակությունը հնարավորություն չի տալիս ներկայացնել ծնողների մասնակցության մակարդակը դպրոցի որոշ գործառույթների իրականացման խնդրում, քանի որ հարցվածների մեջ դպրոցի կառավարման և ծնողական խորհրդի անդամ ծնողների թիվը վիճակագրական տեսանկյունից փոքր է: Հետևաբար, պայմանականորեն առանձնացվել են ծնողական

[10] ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի 801-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն
[11] Նույն տեղում, կետ 102.1
[12] ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 15-ի N954-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն
[13] ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի 801-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն

խորհուրդների տեղեկացվածությունը դպրոցների գործունեության ուսումնական գործառույթների և ձեռնարկատիրական և/կամ ֆինանսական գործունեության վերաբերյալ:

Գրաֆիկ 1 Բյուջեի բովանդակությանը ծանոթ լինելու մակարդակը



Դպրոցի գործունեությանը ծնողական խորհուրդների մասնակցության կարևոր բաղադրիչներից մեկը հաստատության ֆինանսական գործունեության թափանցիկությունն ու տեղեկատվության հասանելիությունն է: Հարցված ծնողների գրեթե կեսը բոլորովին ծանոթ չէ բյուջեի բովանդակությանը:

Պետք է հաշվի առնել, որ հարցված 390 ծնողներից 63-ը (16%-ը) դպրոցի ծնողական և կառավարման խորհրդի ակտիվ անդամներ են, որոնք պետք է ավելի տեղեկացված լինեին, քան դրանում չընդգրկված ծնողները: Ծնողական խորհրդի գործունեության արդյունավետությունը գնահատելու համար ուսումնասիրվել են դպրոցի ֆինանսական վիճակի վերաբերյալ ծնողների տեղեկացվածության աղբյուրները:

Գրաֆիկ 2 Բյուջեի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները



Բյուջեի վերաբերյալ այս կամ այն չափով տեղեկացված են հարցվողների 54,5%-ը, որոնց ճնշող մեծամասնությունը այլ տեղեկատվության աղբյուրներին զուգահեռ բյուջեի մասին

հիմնականում տեղեկանում է ծնողական խորհրդի միջոցով (84,9%): Սակայն մեծ է հավանականությունը, որ ծնողների մի մասը բյուջե ասելով ի նկատի է ունեցել դասարանի շրջանակներում տարբեր նպատակներով հավաքվող գումարները և դրանց վերաբերյալ ծնողական խորհրդի հաշվետվությունը:

«Ես չեմ հասկանում ծնողի ինչ գործն է, թե դպրոցի բյուջեն ինչքան է: Կարևորն իր երեխան դաս է գալիս, գիտելիքներ է ստանում: Հիմա, դրա համար դպրոցը 1 միլիոն է ստանում, թե 100 հազար դրամ, կարևոր չէ»:

(մարզային քննարկման մասնակից)

Հեռու են բավարար լինելուց նաև դպրոցի վարչական աշխատողների և մանկավարժների մոտեցումները թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ:

2.2 Ծնողների կատարած ծախսերի վերլուծությունը

Հետազոտությամբ ուսումնասիրվել են նաև ծնողների կողմից իրականացվող ծախսերը: Դրանք առանձնացված են երեք հիմնական ուղղությունների՝ ուսումնական գործընթացի ծախսեր, ոչ ֆորմալ ծախսեր և արտադասարանային պարապմունքներ: Ոչ ֆորմալ ծախսերը գերազանցապես դպրոցի աշխատակիցներին այս կամ այն կերպ տրվող նվերներն են՝ անկախ իրենց բնույթից:

Գրաֆիկ 3. Ծնողների կատարած տարեկան ծախսերի միջինացված կառուցվածքը



2.2.1 Ուսումնական գործընթացի հետ կապված ծախսեր

Ուսումնական ծախսերը իրենց հերթին բաժանվում են ստորև բերված աղյուսակում նշված ծախսային հոդվածների: Ուսումնական ծախսերի առումով հստակ տարբերություն կա 1-4-րդ դասարանցիների և 5-12-րդ դասարանցիների ծախսերի միջև: Ուսումնական ծախսերի վերլուծությունը իրականացվել է մի քանի փոփոխականների գնահատման միջոցով: Սկզբում գնահատվել է, թե այս կամ այն ծախսային հոդվածը որքանով է իրականացվում և ինչպիսի պարբերականությամբ: Այնուհետև ուսումնասիրվել են ծախսային հոդվածների վճարման տարբերակները և ուղիները: Վերջում վերլուծվում է, թե որքանով են ծնողները տեղեկատվություն ստանում իրենց ծախսերի վերաբերյալ:

Աղյուսակ 10. Ծախսային հոդվածների առկայությունը և դրանց պարբերականությունը (%)

	Ծախսային հոդվածները	1-4-րդ դասարան	5-12-րդ դասարան	Ծախսերի պարբերականությունը
1	Դասագրքեր	19.1	92.7	տարեկան
2	Աշխատանքային տետրեր	71.3	52.0	ըստ անհրաժեշտության
3	Էքսկուրսիաներ	74.8	78.5	ըստ անհրաժեշտության
4	Մշակութային միջոցառումների տոմսեր	55.7	44.4	ըստ անհրաժեշտության
5	Աջակցություն կարիքավորներին	45.2	45.5	ըստ անհրաժեշտության
6	Ֆոնդի գումար	37.4	39.6	ամսական
7	Սննդի գումար	47.8	7.6	ամսական
8	Դպրոցական միջոցառումների կազմակերպում	27.0	31.6	ըստ անհրաժեշտության
9	Դասասենյակի համար պարագաներ	21.7	25.5	ըստ անհրաժեշտության
10	Մաքրության և հիգիենայի պարագաներ	11.3	14.9	ամսական
11	Համազգեստ	9.6	10.9	տարեկան
12	Վերջին զանգ	4.3	18.5	ըստ անհրաժեշտության
13	Հավաքարարի գումար	1.7	7.3	ըստ անհրաժեշտության
14	Այլ ծախսեր	5.2	4.0	ըստ անհրաժեշտության

Եթե 1-4-րդ դասարանցիների ծնողների 19.1%-ն է վճարում դասագրքերի համար, ապա բարձր դասարանցիների դեպքում 92.7%-ը: Եթե առաջին խմբի դեպքում դպրոցների մեծամասնությունում դասագրքերը տրամադրվում էին անվճար, ապա բարձր դասարանների դեպքում դասագրքերի համար չվճարելու պատճառը ֆինանսական հնարավորությունների բացակայությունն էր: Փոխարենը, 1-4-րդ դասարանցիների ծնողների 71,3%-ը վճարումներ է կատարում աշխատանքային տետրերի համար: 5-12-րդ դասարանցիների ծնողների դեպքում այդ ցուցանիշը 52% է:

Ամեն 10-րդ ծնողը նշել է, որ ամեն տարի ձեռք է բերում համազգեստ: Պետք է նշել, որ ծախսային հոդվածների զգալի մասը շատ դպրոցներում վճարվում է այսպես կոչված «ֆոնդի գումարներից», մասնավորապես՝ դպրոցի մաքրություն և հիգիենայի պարագաներ, դասասենյակի համար պարագաներ: «Ֆոնդի գումարներ» մուծել են հարցվողների շուրջ 40%-ը:

Ծնողների կատարած ծախսերի չափը էականորեն տարբերվում է: Ծնողների 3%-ը աշակերտի վրա ծախսում է ամսական միջին հաշվով 1000 դրամից պակաս գումար, իսկ հարցվածների 12%-ը՝ 20 հազար դրամից ավել է ծախսում մեկ երեխայի համար: Պետք է, այնուամենայնիվ, նշել, որ կատարված ծախսերը չեն արտացոլում ծնողների սոցիալական վիճակը, այլ պայմանավորված են հիմնականում երեխայի դասարանով: Մոնիտորինգի արդյունքներն արձանագրում են, որ աշակերտների տարիքին զուգահեռ աճում են նաև նրանց ուսումնառության համար կատարված ծախսերը:

Գրաֆիկ 4. Հարցվողների բաշխումն՝ ըստ մեկ աշակերտի համար իրականացված ամսական ծախսերի (%)



Աղյուսակ 11. Մեկ աշակերտի համար իրականացված ամսական ծախսերը (%)

Աշակերտի դասարանը	Միջին ամսական ծախսը (դրամ)						Ընդամենը հարցվածներ
	մինչև 1.000	1.000-5.000	5.000-10.000	10.000-15.000	15.000-20.000	20.000-ից ավելի	
1-4-րդ դասարանցիներ	5,0%	28,7%	38,6%	20,8%	5,0%	2,0%	101
5-12-րդ դասարանցիներ	2,8%	6,8%	28,4%	36,0%	10,4%	15,6%	250

Մեկ աշակերտի համար արված ամսական միջին ծախսը 12.438 դրամ է: Միաժամանակ, եթե 1-4-րդ դասարանցի աշակերտի ամսական միջին ծախսը ընդամենը 8.249 դրամ է, ապա 5-12–րդ դասարանցիների միջին ամսական ծախսը շուրջ 14.221 դրամ է: Ամսական 5.000-15.000 դրամ ծախսում են հարցվողների 2/3-ը: Առկա է աշակերտների պարագաների ծախսերի սեզոնայնություն: Օրինակ՝ համազգեստի, աշխատանքային տետրերի վճարները կատարվում են տարեսկզբին: Այս սեզոնայնությունը առավել հստակ է ըստ անհրաժեշտության իրականացվող ծախսերի պարագայում:

Մյուս հարցը, որն ուսումնասիրվել է, կապված է վճարների իրականացման տարբերակների հետ:

Աղյուսակ 12. Վճարման հիմնական եղանակը (%-ը ընդհանուր հարցվածների մեջ)

	Ծախսային հոդվածներ	Առձեռն տվել եմ ծնողական խորհրդի անդամին	Առձեռն տվել եմ դասղեկին	Փոխանցել եմ գումարը երե-խայի միջոցով	Այլ
1	Էքսկուրսիաներ	44,1	7,7	18,7	5,6
2	Աշխատանքային տետրեր	20,8	13,3	15,1	5,6
3	Աջակցություն կարիքավորներին	20,5	4,1	11,6	2,6
4	Ֆոնդի գումար	19,0	5,6	14,9	1,8
5	Դասագրքեր	18,5	21,5	21,5	6,2
6	Մշակութային միջոցառումների տոմսեր	15,1	8,5	18,5	5,9
7	Դպրոց. միջոցառումների կազմակերպում	10,5	2,1	7,9	2,1
8	Սննդի գումար	10,5	3,3	1,5	0,6
9	Վերջին զանգ	7,2	2,1	5,1	0,6
10	Դասասենյակի համար պարագաներ	6,9	4,1	8,7	3,1
11	Դպրոցի մաքրություն և հիգիենայի պարագաներ	3,3	1,8	9,2	2,9
12	Հավաքարարի գումար	1.0	1,5	2,1	0,3
13	Համազգեստ	0,8	1,3	2,3	5,9

Աղյուսակից երևում է, որ ծնողական խորհուրդն հիմնականում դրամ է հավաքում էքսկուրսիաների համար (44,1%), աշխատանքային տետրերի (20,8%), կարիքավորներին աջակցելու (20,5%) և «ֆոնդի գումարի» (19,0%) համար: Դասղեկների միջոցով առավելապես փոխանցվում է դասագրքերի (21,5%) և աշխատանքային տետրերի (13,3%) վճարները: Զգալի են նաև երեխաների միջոցով փոխանցվող վճարները. դասագրքեր (21,7%), էքսկուրսիաներ (18,7%), տոմսեր (18,5%), աշխատանքային տետրեր (15,1%), ֆոնդի գումար (14,9%): Դասագրքերի վարձավճարների որոշ մասը վճարվել է գրադարանավարին: Ծնողների 5%-ը աշխատանքային տետրերը գնել է անմիջականորեն: Նույն կերպ՝ հարցվողների 6%-ը գնել են աշակերտական համազգեստ:

Հարցված 390 ծնողներից միայն 3-ն են բանկային փոխանցման միջոցով կատարել վճարում . մեկական հոգի դասագրքերի, դպրոցական միջոցառումների կազմակերպման և կարիքավորներին աջակցություն նպատակով:

Հարցվողների գերակշիռ մասը տեղեկանում է իր վճարումների մասին երկու հիմնական տարբերակով՝

1. հարցվողը ինքն է տեսել արդյունքները (55%)
2. ներկայացվել է բանավոր հաշվետվություն (22%)

Պատասխանի այլ տարբերակները չեն գերազանցում 5-7%-ը: Ծախսերի մասին պատասխանների այսպիսի պատկերն ունի օբյեկտիվ բնույթ, քանի որ շատ ծախսային հոդվածների ֆորմալացումը ներկա պահին տեխնիկապես բարդ է: Ծախսերի որոշ մասը իրականացվել է անմիջականորեն ծնողի կողմից: Ծախսերի մի մասն էլ «նյութական» են և կարող են հեշտությամբ գնահատվել ծնողի կողմից, օրինակ՝ գրքերը, համազգեստը, աշխատանքային տետրերը:

2.2.2 Նվերներ դպրոցի աշխատակազմին

Ծնողների կատարած ծախսերի նշանակալի մասը բաժին է ընկնում ուսման գործընթացի հետ չկապված, ոչ ֆորմալ ծախսերին, որոնք հիմնականում դպրոցի աշխատակազմին տրված նվերներն են: Հետազոտությամբ տարբերակվել են երկու տեսակի նվերներ՝ կոլեկտիվ և

անհատական: Ըստ տեսակի նվերները բաժանվել են երեք խմբի՝ ծաղկեփունջ, դրամական գումար, այլ նվերներ (սպասք, օծանելիք, զարդեր, տեխնիկա և այլն): Հարցվողների 47%-ը նախորդ տարվա ընթացքում նվիրել է որևէ նվեր դպրոցի աշխատակազմին:

Աղյուսակ 13. Դպրոցի աշխատակազմին տրված նվերներն ըստ տեսակների (%-ը ընդհանուր հարցվածների մեջ)

Ոչ ֆորմալ ծախսերի բաշխումները	Տնօրեն/ուսմասվար		Դասղեկ/դասվար		Ուսուցիչ	
	Անհա-տական	Կոլեկ-տիվ	Անհա-տական	Կոլեկ-տիվ	Անհա-տական	Կոլեկ-տիվ
Ծաղկեփունջ	1,8	6,9	5,1	34,1	1,5	12,1
Նվեր գումարի տեսքով	0,5	0,8	-	2,1	-	0,8
Այլ (սպասք, օծանելիք, զարդեր, տեխնիկա և այլն)	1,3	0,3	-	0,9	-	0,5
Ընդամենը	**3,6**	**7,9**	**5,1**	**37,1**	**1,5**	**13,3**

Ծաղկեփունջը առավել տարածված նվերն է, որը հիմնականում նվիրում են կոլեկտիվ կերպով: Անհատական տարբերակով գումար և այլ նվերներ տալը անհամեմատ ավելի քիչ է տարածված: Պետք է նշել, որ ծաղկեփունջը սովորաբար նվիրում են այլ նվերների հետ միասին:

Գրաֆիկ 5. Ծաղկեփնջերի համար տարեկան ծախսված գումարները



Ըստ հետազոտության արդյունքների՝ ծաղկեփնջերի համար տարեկան ծախսված գումարները միջին հաշվով չեն գերազանցում 2500 դրամը: Հարցվածների երեք քառորդը (75,3%) ծաղկեփնջերի համար ծախսում են, ընդհանուր առմամբ, 5 հազար դրամից պակաս: Գումարի տեսքով նվերի վրա ծնողները տարեկան միջին հաշվով ծախսում են 3822 դրամ: Այլ նվերների դեպքերը ընտրանքում շատ փոքր թիվ են կազմում և դրանց համար միջին տարեկան ծախսը 1100 դրամ է:

Հատկանշական է, որ հարցվածների շուրջ 85%-ը դրամահավաքների հետ կապված դժգոհություն չունեն: Դժգոհություն ունեցողները հիմնականում իրենց դժգոհությունը կիսում են դասղեկի և ծնողական խորհրդի հետ: Հարցվածներից ոչ ոք չի բողոքել գրավոր դիմումի միջոցով, միայն 1 հոգի է ԿԳՆ թեժ գծի միջոցով դիմել հարցի լուծման ակնկալիքով:

2.2.3 Դասագրքերի հասանելիության և որակի գնահատումը

Մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրվել են նաև դասագրքերի հասանելիության և որակի խնդիրները: Դասագրքի հասանելիության խնդիրներ ունեցել է հարցվողների ընդամենը 5,9%-ը: Պետք է նշել, որ այդ խնդիրների մեծամասնությունը լուծվել է ծնողի ուժերով և վերաբերել է հիմնականում մեկ դասագրքի:

Մյուս կարևոր խնդիրը կապված է դասագրքերի վարձավճարների հետ: Մինչ դասագրքերի համար վճարելը դասագրքերի վարձավճարների չափը հաստատող որևէ պաշտոնական փաստաթղթի ծանոթացել է հարցվողների կեսից ավելին (51,3%-ը):

Գրաֆիկ 6. Դասագրքերի վարձավճարների գնացուցակների մասին տեղեկատվության աղբյուրը (%)



Դասագրքերի վարձավճարի սահմանված գումարից բացի հավելյալ գումար վճարել է հարցվողների ընդամենը 1,3%-ը: Դասագրքերի վերաբերյալ հարցվածների հնչեցրած խնդիրների զգալի մասը վերաբերում էր դասագրքերի տպագրության որակին, դրանց մաշվածությանը, նոր տպագրված դասագրքերի պահանջին: Բովանդակության տեսանկյունից առկա են իրարամերժ մտքեր (օրինակ ոմանք նշում են, որ մաթեմատիկայի և ֆիզիկայի խնդիրները չափազանց բարդ են, մյուսները նշում են դրանց պարզունակության մասին)՝ սկսած բնագիտական առարկաների դասագրքերում խնդիրների քանակի և որակի բարձրացումից, վերջացրած դասագրքերի պարզեցմամբ և աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվի առմամբ: Այս խնդիրը կարող է մասամբ պայմանավորված լինել ծնողների կողմից այս կամ այն առարկայի հեռանկարայնության գնահատականով՝ հաշվի առնելով աշակերտի մասնագիտական և կրթական կողմնորոշումները:

Դասագրքերի բարդության հետ կապված դժգոհություն են հայտնել ծնողների 26,7%-ը: Ծնողների կողմից դասագրքերի գնահատականները ունեն սուբյեկտիվ բնույթ, այնուամենայնիվ կարելի է վստահաբար ասել, որ հիմնական խնդիրները կապված են բնագիտական առարկաների դասագրքերի հետ: Դասագրքերի բարդությունից դժգոհությունների հաջորդ խումբը կապված է օտար լեզվի դասագրքերի հետ:

Գրաֆիկ 7. Դասագրքերի բարդությունից դժգոհություններն ըստ առարկաների



Առաջարկների մեջ հիմնական մասը վերաբերում էր դասագրքերի բովանդակության որակի բարելավմանը, դրանց մատչելիության և հասանելիության բարձրացմանը:

2.2.4 Լրացուցիչ պարապմունքները և դրանց ազդեցությունը

Գաղտնիք չէ, որ լրացուցիչ պարապմունքները մանկավարժներին հնարավորություն են տալիս լրացուցիչ եկամուտ ստանալ: Մի կողմից այս երևույթը հնարավորություն է տալիս մասնակիորեն մեղմել մանկավարժների սոցիալական խնդիրները, բայց մյուս կողմից լրացուցիչ պարապմունքները կոռուպցիոն ռիսկեր են ձևավորում: Ընդհանուր առմամբ լրացուցիչ պարապմունքները անվերահսկելի են, գտնվում են ստվերում, դրանց ծավալների մասին կան իրարամերժ տվյալներ:

Ըստ հարցվածների պատասխանների՝ աշակերտների 23%-ը հաճախում է լրացուցիչ պարապմունքների առնվազն մեկ առարկայի գծով, իսկ աշակերտների 9%-ը հաճախում է առնվազն երկու առարկաների գծով լրացուցիչ պարապմունքների: Մեկ առարկայի գծով լրացուցիչ պարապմունքների միջին ամսական վարձավճարը 12.182 դրամ է: Մեկ աշակերտի մեկ առարկայի լրացուցիչ պարապմունքների համար ծնողը տարեկան ծախսում է միջին հաշվով 131.500 դրամ:

Լրացուցիչ պարապմունքների հաճախողների 80%-ից ավելին բարձր դասարանների աշակերտներ են: Ենթաընտրանքի փոքր թիվը (91 հոգի) հնարավորություն չի տալիս ավելի խորությամբ ուսումնասիրել լրացուցիչ պարապմունքների բովանդակությունը և արդյունավետությունը: Այնուամենայնիվ, հետաքրքրական է այն հանգամանքը, որ աշակերտների ավելի քան 2/3-ը (70,1%) լրացուցիչ պարապմունքների հաճախում են դպրոցի հետ կապ չունեցող անձի մոտ: Դպրոցում դասավանդող ուսուցիչները լրացուցիչ պարապմունքներ իրականացնողների ընդամենը քառորդ մասն են (24,4%): Ծնողները նախընտրում են, որ լրացուցիչ պարապմունքները իրականացնեն դպրոցի հետ կապ չունեցող անձինք:

Մարզկենտրոններում ձևավորվել և զգալի պահանջարկ ունի կրկնուսույցների (ռեպետիտորների) ինստիտուտը: Ընդ որում, ծնողների պնդմամբ պարապմունքների շուրջ 80%-ը ուսուցչի տանն է իրականացվում: Լրացուցիչ պարապմունքները դպրոցում իրականացնում են լրացուցիչ պարապմունքների հաճախող աշակերտների ոչ ավելի քան 4%-ը:

Դպրոցի կամ ուսուցչի հետ պայմանագիր, որը կարգավորում է լրացուցիչ պարապմունքների պայմանները, կնքել է հարցվածների ընդամենը 1%-ը կամ լրացուցիչ պարապմունքների հաճախողների 3,5%-ը:

Լրացուցիչ պարապմունքները իրականացվում են հանրակրթական դասերին զուգահեռ և ինտենսիվ հաճախականությամբ: Պարապմունքների միջին հաճախականությունը շաբաթական 3 դաս է: Աշակերտները միջին հաշվով հաճախում են լրացուցիչ պարապմունքների 10,8 ամիս: Պարապմունքները իրականացվում են միջին հաշվով 4 հոգանոց խմբերով, ընդ որում 7 և ավելի աշակերտներից կազմված խմբերը հազվադեպ են:

Գրաֆիկ 8. Լրացուցիչ վճարովի պարապմունքներ ըստ առարկաների



Լրացուցիչ պարապմունքների հիմնական առարկաները օտար լեզուներն ու մաթեմատիկան են: Լրացուցիչ պարապմունքների հետ կապված մյուս հարցը, որ ուսումնասիրվել է, այն է, թե ով է հանդիսանում կրկնուսույց: Դպրոցի հետ կապ չունեցող անձինք հիմնականում մասնագիտացած կրկնուսույցներն են, որոնց մեծամասնության գործառույթը աշակերտներին բարձրագույն ուսումնական հաստատություն (ԲՈՒՀ) ընդունվելուն նախապատրաստելն ու համապատասխան կարողությունների զարգացումն է: Հարցվածներից ամեն չորրորդի երեխան պարապում է տվյալ առարկան նույն դպրոցում իրեն դասավանդող ուսուցիչի հետ:

Գրաֆիկ 9. Լրացուցիչ պարապմունք իրականացնող անձը



Գրաֆիկ 10. Լրացուցիչ պարապմունքների ազդեցությունը գիտելիքների մակարդակի վրա՝ ըստ ծնողների



Պարապմունքները, ծնողների ճնշող մեծամասնության գնահատմամբ, ունեցել են դրական ազդեցություն աշակերտների գիտելիքների վրա: Լրացուցիչ պարապմունքների հաճախող աշակերտների ծնողների շուրջ երեք քառորդը նշել է, որ լրացուցիչ պարապմունքների շնորհիվ իրենց երեխայի գնահատականը բարձրացել է, ընդամենը 4%-ն է նշել, որ գնահատականի բարձրացումը կապ չուներ պարապմունքների ազդեցության հետ:

Պարապմունքների հաճախող աշակերտների ծնողների 10%-ը նշել են, որ լրացուցիչ պարապմունքներին մասնակցության հարցում եղել է ուղղակի կամ անուղղակի պարտադրանք/ուղղորդում հիմնականում ուսուցիչների կողմից: Արձանագրվել են մի քանի դեպքեր, որ ուսուցիչը խորհուրդ է տվել դիմել այս կամ այն մասնագետին:

Լրացուցիչ պարապմունքների հաճախող աշակերտների ծնողների 2/3-ի (77,1%) գնահատմամբ, դրանք չեն ազդել մանկավարժների վերաբերմունքի վրա: 7%-ը նշել են, որ լրացուցիչ պարապմունքների հետևանքով մանկավարժների վերաբերմունքը աշակերտի նկատմամբ ավելի վատացել է: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ այս գնահատականը ունի զգալի սուբյեկտիվ կողմ: Չի բացառվում, որ ծնողների մի մասը լրացուցիչ պարապմունքներից ակնկալվող դրական փոփոխությունների բացակայությունը կապում է մանկավարժի կանխակալ վերաբերմունքի հետ:

Առաջնահերթ նշանակություն ունեն լրացուցիչ պարապմունքների հաճախելու դրդապատճառները, որոնք հիմնականում փոփոխվում են աշակերտների տարիքին զուգընթաց:

Եթե ավելի ցածր դասարաններում լրացուցիչ պարապմունքների նպատակը աշակերտի գիտելիքների որոշակի մակարդակի հասցնել է, ապա ավելի բարձր դասարաններում լրացուցիչ պարապմունքները կենտրոնացված են բացառապես ընդունելության քննությունների պահանջների վրա՝ պայմանավորված բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների և դպրոցում մատուցված նյութի միջև առկա տարբերությամբ: Այս գործոնով է պայմանավորված, որ ծնողները նախընտրում են իրենց երեխաների լրացուցիչ պարապմունքները իրականացվեն ավելի «մասնագիտացված» կրկնուսույցների կողմից:

Աղյուսակ 14. Լրացուցիչ պարապմունքների դրդապատճառները

Ձեր երեխան լրացուցիչ վճարովի պարապմունքների է հաճախում, քանի որ ...	**Համաձայն եմ**	**Համաձայն չեմ**	**Պատասխան-ների թիվը**
... ցանկանում ենք բարձրացնել գնահատականը	25,6%	74,4%	80
... դասի ընթացքում չեն հասցնում յուրացնել նյութը (ժամաքանակը քիչ է)	46,5%	53,5%	68
... դասարանում աշակերտների մեծ թիվը թույլ չի տալիս յուրաքանչյուր աշակերտի անհատական մոտեցում ցուցաբերել	46,2%	53,8%	65
... դասավանդող ուսուցիչը անտարբեր է/սրտացավ չէ	16,2%	83,8%	68
... առարկան դասավանդող ուսուցիչը այնքան էլ լավ մասնագետ չէ	22,9%	77,1%	70
... ընդունելության քննությունների պահանջներն ավելի բարդ են, քան աշակերտներին մատուցված նյութը	74,6%	25,4%	63

Հիմքեր կան եզրակացնելու, որ լրացուցիչ պարապմունքների հաճախելու դրդապատճառները կապված չեն աշակերտ-մանկավարժ և ծնող-մանկավարժ փոխհարաբերությունների հետ: Լրացուցիչ պարապմունքների մասնակցությունը և տարածվածությունը ավելի շուտ համակարգային բնույթ ունեն և կապված են կրթական համակարգի ներքին հակասությունների և անկատարության հետ՝ մասնավորապես ԲՈՒՀ-դպրոց կրթական պահանջների և տրամադրված գիտելիքների բացերի հետ:

ԳԼՈՒԽ 3. ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Իրավական կարգավորումներ

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, դպրոցի ֆինանսական գործունեության մեջ առանցքային դերակատարում ունի դպրոցի կառավարման խորհուրդը: Ըստ խորհրդի ձևավորման կարգի[14]՝ **կառավարման մարմինը՝ խորհուրդը կազմվում է** 8 անդամից: Խորհրդի անդամներին առաջադրում են.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարը,
2. լիազորված մարմինը (մարզպետարան, Երևանի քաղաքապետարան),
3. մանկավարժական խորհուրդը,
4. ծնողական խորհուրդը:

Մարզային ենթակայության հաստատություններում, որոնք մարզում գործող հիմնական դպրոցներն են, ԿԳ նախարարն առաջադրում է խորհրդի մեկական անդամ, մարզպետը՝ 3 անդամ, որից 1-ին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը: Մանկավարժական խորհուրդը և ծնողական խորհուրդը բոլոր դեպքերում առաջադրում են 2-ական թեկնածու:

Նախարարության ենթակայության հաստատություններում, որոնք մարզում գործող ավագ դպրոցներն են, ԿԳ նախարարը առաջադրում է խորհրդի 3 անդամ, մարզպետը՝ 1 անդամ, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը 1 անդամ: Մանկավարժական խորհուրդը և ծնողական խորհուրդը կրկին առաջադրում են 2-ական թեկնածու:

Հանրակրթական դպրոցի **ծնողական խորհուրդը կազմավորվում է** դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: ԿԳ նախարարի N113-Ն հրամանի[15] համաձայն ՀՀ մարզային ենթակայության հաստատություններում մարզպետն առաջադրում է խորհրդի 3 անդամ, որից մեկին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը: Հաստատության մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ տվյալ հաստատությունում առնվազն 3 տարվա մանկավարժական գործունեության ստաժ ունեցող անդամներից ընտրում է խորհրդի 2 անդամ: Հաստատության ծնողական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի 2 անդամ: Այսպիսով, խորհրդի անդամների թիվը 8 է: Մասնագիտացված և հատուկ հանրակրթական հաստատությունների խորհրդի կազմը ձևավորվում է համաձայն տվյալ տեսակի հաստատության կանոնադրության՝ խորհրդում ընդգրկելով լիազորված մարմնի ներկայացուցիչներին:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատության խորհուրդը տնօրենի ներկայացմամբ քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում հաստատման, քննարկում է հաստատության ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները[16]: **Խորհրդի լիազորությունների** մեջ է մտնում հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրությունը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը և ներքին կարգապահական կանոնների հաստատումը, դպրոցի զարգացման ծրագրի հաստատումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակների քննարկումն ու հավանության արժանացնելը, դպրոցի շահույթի

[14] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին N113-Ն հրամանը

[15] ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. մարտի 18-ի N113-Ն հրամանը ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեվավորման կարգը հաստատելու մասին

[16] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1

տնօրինման հիմնական ուղղությունների սահմանումը, իր աշխատակարգի սահմանումը և այլ լիազորություններ[17]:

Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որոնք նախագահում է խորհրդի նախագահը: Խորհրդի նիստերն արձանագրվում են, որոնք վավերացնում է խորհրդի նախագահը[18]:

Ըստ ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության՝ խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև պետական լիազորված մարմնի, տնօրենի կամ խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով[19]:

Բյուջեի պլանավորման և հաշվետվության կարգը սահմանված է նախարարի հրամանով: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգի[20] 22-րդ կետի՝ ուսումնական հաստատու-թյան բյուջեի հրապարակայնությունն ապահովելու, բյուջեի մշակման, քննարկման, կատարման և վերահսկման աշխատանքներին համայնքի բնակչության, բոլոր շահագրգիռ կազմակերպություններին իրազեկելու և ներգրավելու նպատակով ուսումնական հաստատության տնօրենը բյուջեի նախագիծը խորհրդին ներկայացնելուց 20 օր առաջ հրապարակում է հաստատության պաշտոնական կայքում, հաստատությունների հայտարարությունների համար նախատեսված անկյունում, կարող է հրապարակել նաև տեղական մամուլում՝ քաղաքացիներից, շահագրգիռ կազմակերպություններից 15-օրյա ժամկետում կարծիքներ, առաջարկներ ստանալու համար: Բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո բյուջեի եռամսյակային կատարման մասին տեղեկություն հրապարակում է հաստատության պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում, կարող է հրապարակել նաև տեղական մամուլում:

Ըստ ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգի[21] հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատության խորհրդի հավանությանն արժանանալուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է ուսումնական հաստատության պաշտոնական կայքում կամ տեղական մամուլում և ուսումնական հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում:

Հանրակրթական ուսումնական հաստատության **բյուջեի նախագծի մշակմանը մասնակցում են նաև ծնողական խորհուրդները**: Մասնավորապես, բյուջեի նախապատրաս-տական փուլում տնօրենն ապահովում է հաստատության բյուջեի նախնական տարբերակի քննարկում մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, խորհրդի, քաղաքացիների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով: Նախքան լիազոր մարմնին ներկայացնելը հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագիծը պետք է հաստատվի կառավարման խորհրդի կողմից: Տնօրենի կողմից բյուջեի նախագիծը, ներառյալ դրա առնչությամբ ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացնում է խորհրդին, որը քննարկելով ներկայացված նախագիծը և առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը, ընդունում է որոշում կամ նախագծին հավանություն տալու կամ նախագիծը լրամշակման

---

[17] Նույն տեղում:
[18] Օրինակելի կանոնադրություն, կետ 59, 64:
[19] Օրինակելի կանոնադրություն, կետ 61
[20] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 205Ա/Ք հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգ», կետ 22
[21] Նույն տեղում, կետ 22, ենթակետ 3

վերադարձնելու մասին՝ նշելով կատարման հստակ ժամկետներ[22]: Միայն խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո է բյուջեի նախագիծը ներկայացվում պետական լիազոր մարմնին[23]:

Բյուջեի կատարման վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը պատրաստում և խորհրդին է ներկայացնում կիսամյակային և տարեկան հաշվետվություններ: Խորհուրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով իրականացնում է վերահսկողություն՝ կազմման, քննարկման և հաստատման կատարման նկատմամբ: Մասնավորապես, հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը բյուջեի կատարման վերաբերյալ խորհրդին ներկայացնում է հաշվետվություն՝ կիսամյակային և տարեկան, իսկ խորհրդի պահանջով՝ նաև այլ ժամկետներում: Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ մտնում են տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի մուտքերի և ելքերի վերաբերյալ, դրանց համեմատական վերլուծությունը, տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի կատարված ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք տնօրենն անհրաժեշտ է համարում բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար[24]:

3.1 Խորհրդի որոշումների ընդունումը

Խորհրդի որոշումների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ որոշումների ընդունման գործընթացը լիովին արտացոլված չէ նիստերի արձանագրություններում: Ընդհանուր առմամբ, նիստերի արձանագրություններում նշվում է, որ խորհրդի նախագահը, հաշվապահը կամ դպրոցի տնօրենը հարցը ներկայացրեց, այնուհետև որոշումը կայացվեց: Քննարկումներ, առաջարկություններ, դիտողություններ, փոփոխություններ, անհամաձայնություններ չեն լինում կամ, եթե լինում են, չեն արձանագրվում: Որոշումները կամ ընդունվում են միաձայն կամ չի նշվում, թե քանի անձ կողմ քվեարկեց, քանի անձ՝ դեմ: Պարզապես, նշվում է, որ որոշումն ընդունվել է: Ուսումնասիրված 248 արձանագրությունից ընդամենը մեկում է խորհուրդը քննադատական դիրքորոշում արտահայտել տնօրենի գործունեության նկատմամբ:

Ուսումնասիրված արձանագրություններում չի հանդիպել գրառման դեպք, երբ խորհրդի որևէ անդամ դեմ քվեարկի ֆինանսական փաստաթղթի ընդունմանը: Բոլոր դեպքերում որոշումներն ընդունվում են միաձայն: Խորհրդի անդամները քվեարկում են տարբեր ձևով միայն այն դեպքում, երբ առաջադրվում է դպրոցի տնօրենի մեկից ավել թեկնածու:

Խորհրդի նիստերի պարբերականությունը պահպանված է բոլոր ուսումնասիրված դպրոցներում: Մեկ տարվա ընթացքում առավելագույնը գումարվել է խորհրդի 10 նիստ (Արագածոտնի մարզում), նվազագույնը՝ 4:

Խորհրդի քննարկմանը ներկայացվում են նաև ֆինանսական փաստաթղթերը հաստատելու կամ վերանայելու հարցերը: Սակայն միայն 17 դպրոցներում են քննարկվել և ընդունվել խորհրդի լիազորություններից համարվող խորհրդի տարեկան աշխատակարգ, ներքին գնահատման արդյունքներ:

3.2 Խորհրդի նիստերի արձանագրումը

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկ հաստատելու մասին ՀՀ ԿԳ նախարարի հրամանի

[22] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 205Ա/Ք հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգ», կետ 9-11
[23] Նույն տեղում, կետ 13
[24] Նույն տեղում, կետ 17-19

հավելվածում[25], ի թիվս այլ փաստաթղթերի, նշված է դպրոցի խորհրդի արձանագրություն-ների մատյանը: Դպրոցի խորհրդի նիստերը արձանագրվում են հատուկ մատյաններում՝ ձեռագիր տեսքով: Մոնիտորինգի ենթարկված դպրոցներից միայն մեկում առկա է նիստերի համակարգչային արձանագրում: Ֆինանսական հարցերի շուրջ խորհրդի նիստի ժամանակ ընթացող քննարկումները և կայացվող որոշումները տարբեր ձևով են արձանագրվում տարբեր դպրոցներում: Ուսումնասիրված դպրոցներից 18-ում մանրամասն արձանագրու-թյան մեջ արտագրված են ֆինանսական տվյալները, ուսուցիչների կամ անունների ամբողջական ցուցակները: Խորհրդի նախագահները ստորագրում են փաստաթղթերի բնօրինակները, բայց պարզ չէ, որքանով են խորհրդի անդամները տեղյակ մանրամասներից:

Ուշագրավ է, որ հաստիքացուցակները խորհրդի կողմից հավանության են արժանանում փետրվարյան նիստերում: Նույն ամսին կառավարությունը կատարում է բյուջեի համամասնությունների հաստատումը: Նման դեպքում դպրոցները պետք է, որ համամաս-նությունների մասին տեղեկատվություն ստանան մարտին: Հնարավոր է, փետրվարյան նիստի արձանագրությունը կազմվում է հետին ամսաթվով:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ խորհրդի արձանագրություններում շատ դեպքերում չեն նշվում անդամների բացակայության պատճառների հարգելի կամ ոչ հարգելի լինելը: Սա կարևորվում է այն առումով, որ մեկ տարվա ընթացքում երեք անհարգելի բացակայության դեպքում պետք է դադարեցվեն խորհրդի անդամի լիազորությունները[26]: Առանձին դպրոցներ ընդհանրապես չեն նշում խորհրդի անդամների ներկայության մասին, մի մասն էլ նշում է բացակաների թիվը՝ առանց նշելու բացակայության հարգելի լինելը:

Նիստերի արձանագրությունները միատեսակ ձևաչափ չունեն: Օրինակ՝ այսպիսի զավեշտալի մաս կա արձանագրությունում. «Տնօրենն առաջարկեց դրամական հավելավճարներ տալ: Խորհրդի անդամը ողջունեց այդ գեղեցիկ քայլը»: Շատ են պաթետիկ ոճով գրված արձանագրությունները:

3.3 Դպրոցի բյուջեի, խորհրդի որոշումների հրապարակման միջոցները

Մոնիտորինգի շրջանակներում առանձին ուշադրություն է դարձվել բյուջեի մշակման գործընթացի մասնակցայնությանը և գործընթացի թափանցիկությանը: Հարցված 39 տնօրեններ նշել են, որ դպրոցի բյուջեները հրապարակվում են: Տնօրեններից 9-ը նշել են, որ բյուջեն փակցնում են դպրոցի տեսանելի վայրում, 6-ը նշել են՝ դպրոցի կայքում, 6-ը նշել են՝ դպրոցի կառավարման և ծնողական խորհուրդներում, 5-ը նշել են՝ մարզպետարանի կայքէջում, 3-ը՝ ԿԳՆ կայքում (ի նկատի ունենալով ԿՏԱԿ-ի կայքը), 3-ը՝ ուսուցչանոցում: Մնացած տնօրենները նշել են վերոնշյալ տարբերակներից մի քանիսը: Մեկ տնօրեն չի պատասխանել հարցին:

Լրացուցիչ ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ մարզպետարանների կայքերում, ոչ դպրոցի կայքում ֆինանսական տվյալներ հրապարակված չեն: Որոշ դպրոցների ֆինանսական տվյալներ կան ԿՏԱԿ-ի կայքում տեղադրված ներքին գնահատման նյութերում[27]:

Ինչպես արդեն նշվել էր սույն զեկույցի 2-րդ գլխում և սույն գլխի իրավական կարգավորումներ բաժնում, հանրակրթական ուսումնական հաստատությունների ծնողական խորհուրդները մասնակցում են արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին[28]: Նման աշխատանքներին մասնակցելու արդյունավետության կարևորագույն ցուցանիշը

[25] ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. հունվարի 18-ի «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկ հաստատելու մասին» 23-Ն հրաման
[26] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 3
[27] Հայկական կրթական միջավայր Պաշարների շտեմարան, Ներքին գնահատում 2015-2016թթ.
[28] Օրինակելու կանոնադրություն, կետ 101

ծնողական խորհուրդների անդամների տեղեկացվածության մակարդակն է, առանց որի գործունեությունը կկրի ձևական բնույթ:

Հարցմանը մասնակցած ծնողական խորհրդի անդամների 44,4% նշել են, որ դպրոցը չունի արտաբյուջետային միջոցներ: Հարցումներն արձանագրել են, որ ծնողական խորհրդի անդամների գրեթե կեսը՝ 46,2% իրազեկ չէ դպրոցի արտաբյուջետային միջոցների գոյացման աղբյուրների մասին: Տեղյակ անձանց 1/3-ը (33,3%) նշել են, որ դպրոցի արտաբյուջետային միջոցները ձևավորվում են նվիրատվությունների շնորհիվ:

Ծնողական խորհրդի անդամ ծնողները նշել են, որ արտաբյուջետային ծախսերի մասին տեղեկանում են գրավոր հաշվետվությունների միջոցով, ներառյալ ծախսերի մասին փաստաթղթերը (30,5%), ծախսերի մասին ներկայացվում է բանավոր հաշվետվություն (26,1%), գրավոր հաշվետվություն՝ առանց ծախսային փաստաթղթերի (17,4%): Հարցված ծնողների 15,9% հայտնել է, որ որևէ ձևով արտաբյուջետային ծախսերի մասին չի տեղեկացվում:

Գրաֆիկ 11. Արտաբյուջետային ծախսերի մասին տեղեկատվության ստացման ձևերը



Ծնողական խորհրդի անդամների 18,6%-ը իր իրավասությունը չի համարում տեղեկանալ ծախսերի մասին: Այսինքն՝ այս ծնողները տեղյակ չեն իրենց լիազորության մասին: 28,9%-ը նշում է, որ իրեն հետաքրքիր չէ, ինչը կարող է լիազորությունը չիմանալու կամ արհամարհելու արդյունք լինել: Այդուհանդերձ, 52,6%-ը հաշվետվությունը չստանալու դեպքում քայլեր է ձեռնարկում:

Գրաֆիկ 1. Տեղեկատվություն ստանալու քայլերը հաշվետվության բացակայության պարագայում



Դպրոցի ծնողական խորհրդին մասնակցությունը նույնպես կարևոր ցուցանիշ է, քանի որ ցույց է տալիս, թե որքան է այս կամ այն խորհրդի նիստը կարևորվում և որքան հաճախ է տեղեկատվություն փոխանցվում դպրոցի ծնողական խորհրդին: Միջին հաշվով 2015-2016թթ. ընթացքում դպրոցների ծնողական խորհուրդները 4,9 նիստ են գումարել:

Գրաֆիկ 2. Ծնողական խորհրդի նիստերի քանակը



Պետք է նշել, որ ծնողական խորհրդի անդամները միջին հաշվով մասնակցել են խորհրդի նիստերի կեսին (միջին հաշվով 2,3 նիստ): Այս հանգամանքով կարելի է բացատրել ծնողական խորհրդի անդամների համեմատաբար անտեղյակությունը դպրոցի ֆինանսական գործունեությանը: Վերջին դպրոցական խորհրդի նիստի ամսաթիվը հիշում էին հարցվածների 80%-ը: Ընդ որում՝ ամենահաճախ հնչեցված նիստերի կայացման ժամանակաշրջանը ապրիլ-մայիս ամիսներն էին (շուրջ 40%):

Գրաֆիկ 14. Դպրոցի խորհրդի նիստերին մասնակցող անդամների թիվը



Հաշվի առնելով այս կամ այն թեմայի կարևորությունը, խորհրդի նիստերի մասնակցությունը կարող է զգալիորեն տարբերվել: Ըստ ուսումնասիրված արձանագրությունների, հիմնականում մասնակցությունը լինում է բավականին բարձր: Նիստերի մեծամասնության դեպքում մասնակիցների թիվը գերազանցում է 7-ը:

Ծնող-դպրոց հարաբերությունների տեսանկյունից անցկացված խորհրդի նիստերի մեջ հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրանց, որոնք պարունակում են դպրոցի ֆինանսական գործունեության վերահսկողության և որոշումների կայացման բաղադրիչներ:

Աղյուսակ 15. Բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն ստացումը խորհրդի անդամների կողմից (%)

Բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն	Բյուջեի նախագծին	Բյուջեի վերանայ-մանը	Բյուջեի կատարո-ղականին
1. Անմիջապես նիստի ժամանակ տրամադրվում է	42	38	18
2. Նիստից առնվազն մեկ օր առաջ մեզ ուղարկվում է	24	19	21
3. Բանավոր ներկայացվում է նիստի ժամանակ	24	28	23
4. Ոչ մի ձևով չեմ ծանոթացել	5	4	24
5. Այդ հարցով նիստ չի եղել	2	6	6
6. Այլ	3	4	8
Ընդամենը	100 %	100 %	100 %

Բյուջեի վերաբերյալ տեղեկատվությունը ունի առանցքային նշանակություն, քանի որ միայն դրա միջոցով կարելի է իրականացնել վերահսկողական գործառույթներ: Եթե բյուջեի նախագծին և բյուջեի եռամսյակային վերանայումներին տեղեկանալու տարբերակները գրեթե նույնական են, ապա այլ է պատկերը բյուջեի կատարողականի դեպքում. կառավարման խորհրդի անդամ ծնողների քառորդ բյուջեի կատարողականին ոչ մի կերպ չի ծանոթացել:

«Լավ կլինի, որ դպրոցի մանկավարժները նույնպես տեղյակ լինեն բյուջեի ձևավորման գործընթացին: Ներքին թափան-ցիկությունն ապահովելը նույնպես կարևոր է: Հաճախ ուսուցիչներն ունենում են ուսումնական գործընթացն ապահովելու առաջնային կարիքներ, բայց բյուջեում դրանք չեն արտացոլվում»:

(մարզային քննարկման մասնակից)

Խորհրդի նիստերի ժամա-նակ խորհրդի անդամները հիմնա-կանում նույն ակտիվությամբ են մասնակցում, այնուամենայնիվ խնդրահարույց է այն հանգամանքը, որ մասնակիցների կեսի մասնակցությունը պասիվ է և

սահմանափակվում է միայն քվեարկությամբ և քննարկումը լսելով: Խորհրդի ակտիվ անդամները, որոնք հանդես են գալիս առաջարկություններով, հարցվածների ընդամենը 1/5-րդ մասն են:

Աղյուսակ 16. Մասնակցությունը խորհրդի նիստերին (%)

Մասնակցությունը խորհրդի նիստերին	Բյուջեի նախագծի քննարկմանը և հաստատմանը	Բյուջեի վերանայման քննարկմանը	Բյուջեի կատարողականի քննարկմանը և հաստատմանը
Խորհրդի նիստի ժամանակ հարցեր եմ տվել	26,2	31,7	18,3
Նիստի ժամանակ առաջարկություններ եմ արել	19,8	15,0	21,0
Խորհրդի նիստի ժամանակ քվեարկել եմ	24,6	10,0	22,0
Պարզապես լսել եմ քննարկումը	19,0	30,0	23,6
Ոչ մի ձև չեմ մասնակցել	4,9	6,0	6,8
Այդ հարցով նիստ չի եղել	1,4	3,0	4,3
Այլ (նշել)	4,1	4,3	4,0
Ընդամենը	100 %	100,0 %	100,0 %

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

1. **Դպրոցների բյուջեն գոյանում է գերազանցապես պետական բյուջեից** ստացված գումարներից: Լրացուցիչ կրթական ծառայություններ, վարձակալությունից գոյացած եկամուտներ և նվիրատվություններ մարզային դպրոցները գրեթե չեն ստանում: Անհշան են նաև դպրոցի կողմից բյուջեից կամ այլ կազմակերպություններից ստացված դրամաշնորհային գումարները:

2. Դպրոցի ֆինանսավորման գործող **համակարգը չի շահագրգռում տնօրեններին լրացուցիչ եկամուտներ ապահովելու** և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հարցում: Մարզպետարաններին վերապահված դպրոցների գումարները վերաբաշխելու լծակը դպրոցներին զրկում է իրենց ֆինանսական միջոցները տնօրինելու ազատությունից:

3. Թեև դպրոցներն անցել են խորհրդով կառավարման համակարգի, սակայն **բոլոր ֆինանսական հարցերի լուծումը վերապահված է մարզպետարաններին**: Դպրոցի խորհուրդը ձևական կառույց է և էական դեր չունի դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մեջ:

4. Ուսումնասիրված դպրոցների **ծախսերի առյուծի բաժինը կազմում են աշխատավարձը և դրանց հավասարեցված վճարումները,** ինչպես նաև կոմունալ ծախսերը: Չնչին մաս է կազմում մասնագիտական զարգացման դասընթացների, գույքի և սարքավորումների, նյութերի ձեռքբերման և ընթացիկ նորոգումների վրա կատարվող ծախսերը, իսկ որոշ դպրոցներ տարիներ շարունակ այդ ուղղությամբ ընդհանրապես ծախսեր չեն իրականացնում:

5. **Ավագ դպրոցների պարագայում նկատելի է աշակերտների թվի և ֆինանսավորման նվազման դինամիկա**, հիմնական դպրոցների պարագայում առկա է որոշակի աճ: Սա պայմանավորված է գերազանցապես այն հանգամանքով, որ 12-ամյա կրթության անցնելու նպատակով 2007թ. կատարվեց երկու առաջին դասարանի ընդունելություն իրականացվեց և հիմնական դպրոցների թերբեռնված դասարանները 2015թ. տեղափոխվեցին ավագ դպրոցներ: Բացի այդ հիմնական դպրոցներում վերջին տարիներին արձանագրվել է առաջին դասարանցիների որոշակի աճ:

6. Ըստ արձանագրությունների՝ դպրոցի կառավարման խորհրդի և ծնողական **խորհրդի նիստերն անցկացվում են օրենքով սահմանված պարբերականությամբ**, սակայն կասկածելի է դրանց իրավազորությունը, քանի որ խորհրդի անդամների կողմից հարցման ժամանակ նշվել է 2, 3 կամ 4 հոգու մասնակցություն խորհրդի նիստին, ինչը նշանակում է քվորումի բացակայություն:

7. Բացի ուսուցիչներից դպրոցի **մնացած աշխատողների և կառավարման խորհրդի անդամների համար չկան վերապատրաստման դասընթացներ և միջոցներ**: Խորհրդի անդամները փոխվում են, բայց չկան նոր անդամների համար վերապատրաստման դասընթացներ: Կանոնավոր չեն վերապատրաստվում նաև դպրոցների վարչական և տեխնիկական աշխատողները: Չնայած կարևորվում է դպրոցների զարգացման ծրագրի առկայությունը, բայց ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս դպրոցներին իրականացնել մասնագիտական զարգացման ծրագրեր:

8. Ուսումնասիրված դպրոցները, որպես **պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններ, չեն կատարում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի պահանջները**՝ այն է, սեփական նախաձեռնությամբ որևէ եղանակով հրապարակել իրենց գործունեության մասին 13 անուն տեղեկություն: Ուսումնասիրված դպրոցներից որևէ մեկը այդ պահանջը չի կատարում ամբողջությամբ: Իրավիճակը 2017թ. փոքր-ինչ փոխվել է և որոշ դպրոցներ արդեն հրապարակում են օրենքով նախատեսված որոշ տվյալներ դպրոցների կայքերում, որոնք միավորված են միասնական հարթակ հանդիսացող www.schoolsite.am կայքում: Խնդիրն այն է, որ տվյալները նույն ձևաչափով չեն տեղադրվում և ուշացմամբ են հրապարակում կամ չեն հրապարակվում:

9. **Ծնողների ճնշող մեծամասնությունը տեղյակ չէ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունից**: Ավելին, ըստ դպրոցների որոշ տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների, ծնողները պարտավոր չեն իմանալ դպրոցի ֆինանսական գործունեության մասին: Ծնողների գնահատմամբ, որոնց թվում նաև ծնողական և կառավարման խորհրդի անդամ ծնողներ, դպրոցի բյուջեին «լիովին ծանոթ են» հարցվածներից ամեն 7-րդը, ինչը պայմանավորված է ինչպես դպրոցի կողմից թափանցիկության պակասի և բյուջեի պլանավորման և հրապարակման սահմանված կարգի խախտմամբ, այնպես էլ ծնողների անտարբերությամբ: **Դպրոցների ֆինանսատնտեսական հաշվետվությունները հասանելի չեն հանրության համար:**

10. Ծնողների մեծամասնության համար առանցքային նշանակություն ունեն դպրոցի հետ կապված իրենց կողմից պարբերաբար իրականացվող ծախսերը: **Մեկ աշակերտի համար ծնողը միջին հաշվով ծախսում են ամսական 12-14 հազար դրամ:** Ընդ որում՝ ծախսերը աճում են աշակերտների տարիքին զուգահեռ, իսկ ամեն 10-րդ հարցված ծնող ամսական 20 հազար դրամից ավելի գումար է ծախսում:

11. **Լրացուցիչ պարապմունքների հաճախում են աշակերտների 1/5-րդ մասը,** ընդ որում վարձը միջին հաշվով ամսական 12 հազար դրամ է մեկ առարկայի համար: Կրկնուսույցները հանդիսանում են դպրոցի հետ կապ չունեցող մասնագետներ: Ծնողների հիմնական դրդապատճառներն են՝ դասարանում աշակերտների նկատմամբ սահմանափակ անհատական մոտեցումը, ինչպես նաև ընդունելության քննությունների պահանջների և դպրոցում մատուցված նյութի տարբերությունն ու դրանց բարդությունը:

12. Ուսուցման հետ կապ չունեցող **ոչ ֆորմալ ծախսերը**՝ մանկավարժների կամ դպրոցի աշխատակազմի նվերները, ծնողների ճնշող մեծամասնության կողմից **չեն ընկալվում որպես կոռուպցիոն կամ պարտադրված դպրոցի աշխատակազմի կողմից**: Հարցված ծնողների կեսը նախորդ տարվա ընթացքում նվիրել է որևէ նվեր դպրոցի աշխատակազմին: Պետք է նշել, որ նվերների գերակշիռ մասը իրականացվում են կոլեկտիվ կերպով, ինչը հիմնականում պայմանավորված է տասնամյակներով ձևակերպված ավանդույթով:

13. **Դպրոցները շահագրգռված չեն արտաբյուջետային եկամուտներ ունենալու** հարցում և գումարները հիմնականում ստանում են կանխիկ ձևով: Արտաբյուջետային եկամուտներ ունենալը դպրոցին դնում է հարկային տեսչության ուշադրության տակ:

14. Ծնողներից շատերի համար կարևոր **խնդիր է դասագրքերի որակը և բովանդակությունը**: Չնայած, որ առկա են իրարամերժ դիրքորոշումներ դասագրքերի բարդության վերաբերյալ, այնուամենայնիվ հիմնական խնդիրները կապված են բնագիտական առարկաների դասագրքերի հետ (մաթեմատիկա և ֆիզիկա):

15. **Կառավարման խորհրդի արձանագրությունները չունեն ընդհանուր կարգ,** որը սահմանում է արձանագրման ենթակա պարտադիր կետերը: Շատ դեպքերում չեն նշվում անդամների բացակայության հարգելի կամ ոչ հարգելի լինելը, ինչով պայմանավորված է խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման կարգը: Առանձին դպրոցներ ընդհանրապես չեն նշում խորհրդի անդամների ներկայության մասին, մի մասն էլ նշում է բացակաների թիվը, առանց նշելու բացակայության հարգելի լինելը:

16. Դպրոցի կառավարման և ծնողական խորհուրդների միջև չկա համագործակցություն, հետադարձ կապ: Կառավարման խորհրդի անդամ ծնողներն ընտրվում են ծնողական խորհրդի կողմից, բայց հաշվետու չեն ծնողական խորհրդին: Ծնողների գրեթե կեսը **դպրոցի գործունեությանը իրենց մասնակցությունը չի ընկալում որպես իրենց իրավունքների մաս**:

17. **Դպրոցների գերակշիռ մասում խորհուրդները ձևական կառույցներ են,** որոնք որևէ կերպ չեն իրականացնում օրենքով իրենց վերապահված գործառույթներն ու լիազորությունները: Թեև խորհուրդներով կառավարման համակարգի նպատակն է դպրոցները ֆինանսատնտեսական առումով դարձնել ավելի ինքնուրույն, սակայն ծնողական և կառավարման խորհուրդների

մասնակիցների մեծամասնությունը պասիվ է և մասնակցությունը ապահովվում է միայն ներկայությամբ և միաձայն քվեարկությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Կառավարությանը

1. Վերանայել դպրոցների ֆինանսավորման բանաձևը: Բոլոր դպրոցներին հատկացնել բավարար չափով ֆինանսավորում և դադարեցնել գումարների վերաբաշխման պրակտիկան: Ֆինանսավորման գործակիցներ սահմանելիս հաշվի առնել դպրոցի բնակլիմայական պայմանները՝ լրացուցիչ գումարներ հատկացնելով ցուրտ գոտում գտնվող դպրոցներում: Դպրոցի բյուջեում նախատեսել պարտադիր հոդված աշխատողների մասնագիտական զարգացման համար:
2. Ընդլայնել դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունները՝ երաշխավորելով դպրոցի հաստատված բյուջեի շրջանակներում որոշումներ կայացնելու ազատությունը:
3. Ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի դպրոցները շահագրգռված լինեն ունենալու արտաբյուջետային հաշիվ և բոլոր գումարները ստանան անկանխիկ ձևով:

ԿԳ նախարարությանը

1. Հետամուտ լինել, որպեսզի դպրոցները կատարեն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի պահանջները՝ այն է, սեփական նախաձեռնությամբ որևէ եղանակով հրապարակեն իրենց գործունեության մասին 13 անուն տեղեկություն: Տեսչական ստուգումների պլանում նախատեսել այս պարտավորության կատարման ստուգումը:
2. Ոլորտը կարգավորող նորմատիվ ակտով հստակ սահմանել, թե որտեղ, ինչ ձևաչափով, ինչ մանրամասնությամբ և ինչ ժամկետներում պետք է հրապարակվեն դպրոցների բյուջեները եւ դրանց կատարողականները:
3. ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգում կատարել լրացում և հստակեցնել խորհրդի որոշումների արձանագրության պահանջները: Հատկապես կարևորել հետևյալ պահանջները.
   - Տնօրենի կողմից խորհրդի հաստատմանը ներկայացվող ֆինանսական որոշումների հիմնավորվածությունը, հատկապես, եթե դրանք վերաբերում են առանձին անձանց աշխատավարձերի վերանայմանը,
   - Նիստին մասնակցող կամ բացակայող խորհրդի անդամների անվանական գրանցումը,
   - Նիստից բացակայողների բացակայության որակը՝ հարգելի կամ ոչ հարգելի,
   - Քվեարկությունների անվանական արդյունքները
   - Սահմանել խորհրդի որոշումների արձանագրությունների հրապարակման կարգը:
4. Ապահովել տնօրենի, կառավարման և ծնողական խորհուրդների համագործակ-ցությունը՝ հատկապես ուժեղացնելով ծնողական խորհրդի ներգրավվածությունը ֆինանսական հարցերի մասին որոշումների կայացմանը: Անցկացնել կառավարման և ծնողական խորհրդի տարեկան առնվազն մեկ համատեղ նիստ՝ ֆինանսական հարցերի վերաբերյալ: Նշյալ առաջարկությունն ամրագրել դպրոցի օրինակելի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու միջոցով:
5. Ուժեղացնել նորընտիր տնօրենների և կառավարման խորհրդի նորընտիր անդամների կարողությունների զարգացումը արտաբյուջետային ֆինանսական միջոցների ներգրավման առումով: Իրականացնել մասնագիտական զարգացման ծրագրեր, խրախուսել այն դպրոցներին, որոնք իրականացնում են լրացուցիչ կրթական ծառայություններ, ֆինանսական ռեսուրսներ բերելով դպրոցին: Խրախուսումն

իրականացնել տնօրենի աշխատավարձի հավելավճարի ձևով: Այսինքն՝ տնօրենի աշխատավարձի չափը որոշ մասով կապել նրա կողմից ներգրավված լրացուցիչ ֆինանսական միջոցների հետ:

6. Ներդնել դպրոցների մակարդակով ծախսերի համակարգված տեղեկատվական շտեմարան, ինչը կնպաստի ռեսուրսների ծախսերի օպտիմալացմանը և դրանց թափանցիկությանը: Դա տեսանելի կդարձնի տարբեր մարզերի ցուցանիշները, ինչպես նաև գնահատել ծախսերի նվազման և աճի դինամիկան կոնկրետ դպրոցի մակարդակում:
7. Ապահովել ծնողների մասնակցությունը ֆինանսական գործունեության մասին տեղեկատվության ստացմանը:

Դպրոցների տնօրեններին

1. Կատարել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված սեփական պարտականու-թյունները ամբողջությամբ, մասնավորաբար ապահովել տեղեկության հարցում-ներին պատասխանելու և տեղեկությունները հրապարակելու՝ ՀՀ «Տեղեկատվու-թյան ազատության մասին» օրենքով նախատեսված պահանջների կատարումը:
2. Կատարել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված՝ դպրոցի խորհրդի նիստերի կազմակերպման, անցկացման և արձանագրման պահանջները: Բացառել առանց քվորումի խորհրդի նիստերի անցկացման պրակտիկան:
3. Ձանքեր ներդրել դպրոցի եկամուտները այլընտրանքային և օրինական աղբյուրներից (նվիրատվություններ, դրամաշնորհներ, վճարովի ծառայություններ, արտադրություն և իրացում, վարձակալություն) համալրելու գիտելիքներ ստանալու և միջոցների հայթայթման համար:

Դպրոցների կառավարման խորհուրդների անդամներին

1. Պատշաճ վերահսկողություն իրականացնել դպրոցի տնօրենի գործունեության նկատմամբ:
2. Բացառել առանց քվորումի խորհրդի նիստերի անցկացման պրակտիկան:
3. Ձանքեր ներդրել դպրոցի եկամուտները այլընտրանքային և օրինական աղբյուրներից (նվիրատվություններ, դրամաշնորհներ, վճարովի ծառայություններ, արտադրություն և իրացում, վարձակալություն) համալրելու գիտելիքներ ստանալու և միջոցների հայթայթման համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Ուսումնասիրված իրավական ակտերի ցանկ

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգը հաստատելու մասին» թիվ 205 Ա/Ք հրաման
- «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն
- ՀՀ կառավարության 24. 08. 2006թ. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու մասին» թիվ 1262-Ն որոշում
- ՀՀ կառավարության 04. 11. 2010թ. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1496-Ն որոշում
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 18. 03. 2010թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 113-Ն հրաման

Հավելված 2. Մոնիտորինգի գործընթացում ընդգրկված դպրոցների ցանկը

Արարատի մարզ

1. Արտաշատի թիվ 1 հիմնական դպրոց
2. Արտաշատի թիվ 3 հիմնական դպրոց
3. Արտաշատի թիվ 4 հիմնական դպրոց
4. Արտաշատի ավագ դպրոց

Արմավիրի մարզ

1. Արմավիրի թիվ 3 հիմնական դպրոց
2. Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց
3. Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոց
4. Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց

Արագածոտնի մարզ

1. Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոց
2. Աշտարակի թիվ 2 հիմնական դպրոց
3. Աշտարակի թիվ 4 հիմնական դպրոց
4. Աշտարակի թիվ 5 ավագ դպրոց

Սյունիքի մարզ

1. Կապանի թիվ 1 հիմնական դպրոց
2. Կապանի թիվ 6 հիմնական դպրոց
3. Կապանի թիվ 9 ավագ դպրոց
4. Կապանի թիվ 13 հիմնական դպրոց

Վայոց ձորի մարզ

1. Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց
2. Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց
3. Վայքի հիմնական դպրոց, ներառական
4. Եղեգնաձորի թիվ 3 ավագ դպրոց,

Կոտայքի մարզ

1. Հրազդանի թիվ 9 հիմնական դպրոց
2. Հրազդանի թիվ 11 հիմնական դպրոց
3. Հրազդանի թիվ 14 հիմնական դպրոց
4. Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց

Տավուշի մարզ

1. Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց
2. Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց
3. Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց
4. Իջևանի թիվ 2 ավագ դպրոց

Գեղարքունիքի մարզ

1. Գավառի թիվ 1 հիմնական դպրոց

2. Գավառի թիվ 3 հիմնական դպրոց
3. Գավառի թիվ 5 հիմնական դպրոց
4. Գավառի ավագ դպրոց

Լոռու մարզ

1. Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոց
2. Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոց
3. Վանաձորի թիվ 30 հիմնական դպրոց
4. Վանաձորի թիվ 17 ավագ դպրոց

Շիրակի մարզ

1. Գյումրու թիվ 10 հիմնական դպրոց
2. Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց
3. Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց
4. Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Հավելված 3. Դպրոցների և հարցվողների ընտրության սկզբունքները

Մոնիտորինգի համար ընտրվել է 40 դպրոց, որից 10-ը՝ ավագ, 30-ը՝ հիմնական: Հիմնական դպրոցներից ընտրվել են 100-300 աշակերտ ունեցող դպրոցները, որպեսզի արդյունքները համադրելի լինեն:

Յուրաքանչյուր դպրոցից հարցվելու է 10 ծնող, որոնցից առնվազն 5-ը դպրոցի կառավարման խորհրդի և ծնողական խորհրդի անդամ պետք է լինեն: Բոլոր ծնողները՝ դպրոցի և ծնողական խորհրդի ներկայացուցիչների և խորհրդի անդամ չհանդիսացողները հարցվելու են կիսաձևայնացված հարցաթերթիկի միջոցով: Քանի որ դպրոցի կառավարման խորհրդում ներգրավված ծնողների թիվը մեծ չէ (ծնողական խորհրդի 2 ներկայացուցիչ), երկուսի հետ էլ պետք է իրականացնել հարցում: Այստեղ ընտրանքի կարիք չկա, իսկ ծնողական խորհրդի անդամ 3 հարցվողների ընտրությունը կատարել այս աղյուսակի համաձայն.

Հիմնական դպրոց.

Դասարան	Դպրոց N 1	Դպրոց N 2	Դպրոց N 3	Դպրոց N 4	Դպրոց N 5	Դպրոց N 6
1	X			X		
2		X			X	
3			X			X
4	X			X		
5		X			X	
6			X			X
7	X			X		
8		X			X	
9			X			X

Եթե առաջին դպրոցում ծնողներն ընտրվել են, օրինակ, 1-Ա, 4-Բ և 7-Բ դասարաններից, ապա հաջորդ դպրոցում պետք է հնարավորինս ապահովել դասարանների այբբենական կարգի փոփոխությունը: Օրինակ, N 2 դպրոցում պետք է ընտրել 2-Բ, 5-Գ և 8-Դ դասարանները: Այսինքն, վերջնական ընտրանքում այբբենական տարբեր կարգեր ունեցող դասարանների թիվը հնարավորինս հավասար պետք է լինի. հավասար քանակությամբ «Ա» դասարաններ, հավասար քանակությամբ «Բ» դասարաններ և այլն:

Դպրոցի ներսում դասարանների միջև ընտրության քայլը 3 է, վերցնում ենք յուրաքանչյուր 3-րդ դասարանը:

- 1 – 4 – 7,
- 2 – 5 – 8,
- 3 – 6 – 9:

Հնարավոր է, ինչ-որ պատճառով այս քայլը խախտվի, օրինակ, առաջին դպրոցում չի հաջողվել առաջին դասարանի որևէ ծնող գտնել, և հարցում ենք արել 2-րդ դասարանի ծնողի հետ: Քայլի այս խախտումը հարկավոր է փոխլրացնել հաջորդ դպրոցներում եւ այնպես, որ դասարանների հավասար ներկայացվածություն ապահովենք:

Ավագ դպրոցում ընտրության նույն սկզբունքն է գործում, այն տարբերությամբ, որ դասարանների թիվը փոքր է՝ 10, 11 և 12: Հավասար բաշխման սկզբունքով յուրաքանչյուր դասարանից մեկ ծնող

պետք է ընդգրկվի: Այս դեպքում ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել այբբենական կարգերի հավասարությանը: Օրինակ.

Դասարան	**Դպրոց N 1**	**Դպրոց N 2**	**Դպրոց N 3**	**.....**
10	Ա - Հ	Բ - Հ	Գ - Հ	.....
11	Բ - Հ	Գ - Հ	Ա - Հ	.....
12	Գ - Հ	Ա - Հ	Բ - Հ	.....

Յուրաքանչյուր դասարանի սահմաններում ծնողի ընտրությունը պատահական բնույթ պետք է ունենա, ըստ մատյանի համարի: Օրինակ, առաջին դպրոցից հարցնել մատյանի առաջին համարի ծնողին, 2-րդ դպրոցում՝ 7-րդ համարի, և այսպես շարունակ: Այստեղ քայլն ավելի մեծ կարելի է վերցնել, քանի որ դասարանում երեխաների թիվը բարձր է: Օրինակ՝ քայլը կարող է լինել. 1 – 7 – 13 – 20:

Համանման սկզբունքներ են գործում նաև դպրոցի կառավարման խորհրդի ու ծնողական խորհրդի անդամ չհանդիսացող ծնողների ընտրության համար: Քանի որ յուրաքանչյուր դպրոցից այս խմբի հարցվողների թիվը ավելի մեծ է՝ 5, ընտրության քայլը վերցնել 2:

Հավելված 4. Հարցաթերթիկներ

Ա. Հարցաթերթիկ դպրոցի տնօրենի համար

Հարգելի տնօրեն,
Քաղաքացիական երիտասարդական կենտրոնների կողմից Հայաստանի բոլոր մարզերի 40 դպրոցներում անց է կացվում ուսումնասիրություն դպրոցների ֆինանսական գործունեության արդյունավետության վերաբերյալ: Հարցումն անանուն է: Տվյալներն օգտագործվելու են ընդհանրացված ձևով:

1. Հրապարակվում են արդյո՞ք Ձեր կողմից ստորև նշված հաշվետվությունները և ինչպե՞ս/որտե՞ղ:

Հաշվետվության տեսակ	**Ինչպես է հրապարակվում**
Դպրոցի բյուջեն	
Հաստիքացուցակները	
Հասարակական միջոցառումների ծրագրերը	
Աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).[29]	

2. Արդյո՞ք դպրոցը բացի բյուջետային միջոցներից ունեցել է այլ դրամական միջոցներ 2013-2016 ուս. տարիների ընթացքում:

Դրամաշնորհ, նպատակային ներդրումներ	**Նվերներ, նվիրատվություններ**
(տարբերակները թվարկել/հուշել ստորև բերված ցանկից)	

- մրցութային հիմունքներով ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում.
- վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.
- բարեգործական, նպատակային ներդրումները,
- ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
- ծնողների նվիրատվություններ
- վարձակալություն

3. Ձեռնարկատիրական գործունեության ի՞նչ տեսակներ է իրականացնում Ձեր հաստատությունը.

1. լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում
2. համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում
3. ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում
4. արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
5. չի իրականցնում

[29] Տեղեկությունների ցանկը ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին օրենքի»

6. այլ *(նշել)* _____

4. Ի՞նչ եղանակներով եք հաշվետու լինում նվիրատուներին արտաբյուջետային միջոցների տնօրինման մասին:

_____

5. Ի՞նչ մտահոգություններ, առաջարկություններ, ցանկություններ ունեք՝ կապված Ձեր դպրոցի ֆինանսական կառավարման (պլանավորման, ֆինանսավորման, վերահսկման) գործառույթների ավելի արդյունավետ, թափանցիկ և հաշվետվողական կազմակերպման և իրականացման հետ:

_____

Բ. Հարցաթերթիկ հանրակրթական դպրոցների ծնողների համար

Հարգելի ծնող,
Դպրոց-ծնող համագործակցությունը և արդյունավետությունը բարելավելու նպատակով Քաղաքացիական երիտասարդական կենտրոնների կողմից Հայաստանի բոլոր մարզերի 40 դպրոցներում անց է կացվում ուսումնասիրություն դպրոցների ֆինանսական գործունեության վերաբերյալ: Սույն ուսումնասիրության նպատակն է պարզել ծնողների մասնակցությունը դպրոցի գործունեությանը: Ձեր անունը որևէ տեղ չի նշվելու, ակնկալում ենք Ձեր անկեղծ պատասխանները:

1. Քանի՞ երեխա ունեք, որ ներկայումս սովորում են դպրոցում: _____

		Պատասխանների հաճախականությունը	%-ային բաշխումը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ
Պատասխանների տարբերակներ	1	153	38,3%	39,2%
	2	200	50,0%	51,3%
	3	34	8,5%	8,7%
	4	2	0,5%	0,5%
	5	1	0,3%	0,3%
	Ընդամենը	390	97,5%	100,0%
Բացթողումներ		10	2,5%	
Ընդամենը		400	100,0%	

Վերահաստատել և խնդրել ծնողին, որ հարցերին պատասխանելիս ի նկատի ունենա այն աշակերտին, որին դուք պատահական ընտրանքով ընտրել եք:

2. Որքանո՞վ եք ծանոթ Ձեր դպրոցի բյուջեի բովանդակությանը:

	Պատասխանների հաճախականությունը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ
Լիովին ծանոթ եմ	60	15,4%
Մասամբ ծանոթ եմ	153	39,2%
Բոլորովին ծանոթ չեմ	177	45,4%
Ընդամենը	390	100,0%

3. Ինչպե՞ս եք ծանոթանում դպրոցի բյուջեի բովանդակությանը *(նշել առավելագույնը երկու տարբերակ)*

	Պատասխանների հաճախականությունը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ
Ծնողական խորհրդի միջոցով	208	68,4%
Դպրոցի տեսանելի վայրում փակցված է ֆինանսական հաշվետվությունը	32	10,5%
Այլ ծնողներից	20	6,6%
Դպրոցի կամ մարզպետարանի կայքից	12	3,9%
Ներկայացրել է տնօրենը	6	2,0%
Մասնակցել է բյուջեի կազմմանը	2	0,7%
Դ/Պ	2	0,7%
Այլ	22	7,2%

4.

5. Խնդրում ենք նշել վերջին ուսումնական տարվա ընթացքում ստորև նշված վճարումներից ո՞րն եք կատարել և որքան. Տես գրաֆիկները

(համապատասխան վանդակում թվերով նշել պատասխանները, «այլ»-ի դեպքում գրել պատասխանը վանդակում)

		4.1 <u>Եթե վճարում չեք կատարել,</u> ապա ո՞րն է հիմնական պատճառը: **1**. մեր դպրոցում դրա համար գումար չի հավաքվում **2**. ես չեմ ընդունում այդ պրակտիկան **3**. ֆինանսական հնարավորություն չունեմ **4**. այլ *(նշել)*	**<u>Եթե վճարում կատարել եք, ապա</u> ...**			
			4.2 Ի՞նչ պարբերականությամբ **1.** ամսական **2.** տարեկան **3.** ըստ անհրաժեշտության	**4.3 Որքա՞ն գումար (ՀՀ դրամ)** *(նշել հանրագումարային արժեքը)*	**4.4 Ինչպե՞ս եք <u>հիմնականում</u> կատարել վճարումը** *(նշել հիմնական տարբերակը)* **1.** առձեռն տվել եմ դասարանի ծնողական խորհրդի անդամին **2.** առձեռն տվել եմ դասղեկին **3.** փոխանցել եմ գումարը երեխայի միջոցով **4.** բանկային փոխանցում եմ կատարել **5.** այլ (*նշել*)	**4. 5 Ինչպե՞ս եք տեղեկացել Ձեր վճարած գումարի արդյունքի մասին** *(նշել հիմնական տարբերակը)* **1.** ինքս եմ տեսնում/ինձ ցույց են տալիս **2.** բանավոր հաշվետվություն են ներկայացնում **3**. գրավոր հաշվետվություն են ներկայացնում՝ առանց ծախսերի փաստաթղթերի **4.** գրավոր հաշվետվություն են ներկայացնում՝ ծախսերի մասին փաստաթղթերով **5.** ոչ մի ձև չեմ տեղեկացվում **6.** այլ *(նշել)*
1.	Դասագրքեր					
2.	Աշխատանքային տետրեր					
3.	Դպրոցական համազգեստ					
4.	Ֆոնդի գումար					
5.	Հավաքարարի գումար					
6.	Սննդի գումար (1-4-րդ դասարանցիների)					
7.	Դպրոցի մաքրության և հիգիենայի պարագաներ					
8.	Մշակութային միջոցառումների տոմսեր					
9.	Դասասենյակի համար պարագաներ (վարագույր և այլն)					
10.	Էքսկուրսիաներ					

11.	Դպրոցական միջոցառումների կազմակերպում					
12.	Վերջին զանգ					
13.	Աջակցություն կարիքավորներին					
14.	այլ *(նշել)* …					
15.	այլ *(նշել)* …					

6. Վերջին ուսումնական տարվա ընթացքում որևէ տեսակի նվեր արե՞լ եք դպրոցի անձնակազմին:

	Պատասխանների հաճախականությունը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ
Այո	180	46.2
Ոչ	204	52.3
Պատասխան չկա	6	1.6

***7.* Եթե այո, ապա ո՞ւմ և ի՞նչ նվերներ եք արել:** *(համապատասխան վանդակում՝ անհատական, թե կոլեկտիվ՝ նշելով ընդհանուր գումարը)*

Ոչ ֆորմալ ծախսերի բաշխումները	Տնօրեն/ուսմասվար		Դասղեկ/դասվար		Ուսուցիչ	
	Անհա-տական	Կոլեկ-տիվ	Անհա-տական	Կոլեկ-տիվ	Անհա-տական	Կոլեկ-տիվ
Ծաղկեփունջ	1,8	6,9	5,1	34,1	1,5	12,1
Նվեր գումարի տեսքով	0,5	0,8		2,1		0,8
Այլ (սպասք, օծանելիք, զարդեր, տեխնիկա և այլն)	1,3	0,3		0,9		0,5
Ընդամենը	**3,6**	**7,9**	**5,1**	**37,1**	**1,5**	**13,3**

8. Եթե դժգոհություն եք ունենում դրամահավաքի հետ կապված, ապա... (*նշել մեկ հիմնական պատասխան յուրաքանչյուր հարցի համար*)

7.1 ...ո՞ւմ եք ուղղում ձեր բողոքը/դժգոհությունը			7.2...ի՞նչ ձևով եք արտահայտում բողոքը		
	Պատասխան-ների հաճախա-կանությունը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ		Պատաս-խանների հաճախա-կանու-թյունը	%-ային բաշխումը ստացված պատաս-խանների մեջ
1. տնօրենին/ ուսմասվարին			1.զանգ թեժ գիծ		
2.դասղեկին			2.գրավոր բողոք դիմում		
3. ծնողական խորհրդին			3.բանավոր բողոք		
4. քաղաքապե-տարան			այլ *(նշել)*		
5. մարզպետա-րան			Ընդամենը		
6. ԿԳՆ					
7. ոչ մեկին					
8.դժգոհություն չեմ ունեցել					
Այլ					
Ընդամենը					

Խնդրում ենք պատասխանել դասագրքերի հետ կապված մի քանի հարցերի

9. **Նշեք այն դասագրքերը, որոնց բարդությունից Ձեր երեխան դժգոհում է:** *(նշել առավելագույնը 3 դասագիրք՝ նշելով դասարանը և հնարավորության դեպքում՝ հեղինակին)*

Դասագիրքը	Բաշխումը (%)
Մաթեմատիկա և հանրահաշիվ	22.9
Ֆիզիկա	11.9
Օտար լեզու	10.2
Ռուսերեն	10.2
Պատմություն	8.5
Աշխարհագրություն	6.8
Հայոց լեզու	5.9
Բնագիտություն	3.4
Շախմատ	2.5

10. **Վերջին երեք տարվա ընթացքում քանի՞ դեպք է (դասագիրք) եղել, որ Ձեր երեխան ապահովված չի եղել դասագրքով և Դուք ստիպված եք եղել գնել, պատճենահանել կամ այլ աշակերտի հետ համատեղ օգտագործել դասագիրքը:** _____

11. **Մինչ վճարելը ծանոթացե՞լ եք դասագրքերի վարձավճարների չափը հաստատող որևէ պաշտոնական փաստաթղթի** *(ԿԳ նախարարի հրամանով հաստատված)*:

	Պատասխանների հաճախականությունը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ
Այո	193	51,4
Ոչ	183	48,7

12. **Ոչ *(անցնել հարց 13-ին)* Եթե այո, ապա որտեղի՞ց եք ծանոթացել:**

ցույց են տվել գնացուցակը /ԿԳ նախարարի հրամանով հաստատված /
դպրոցի տեսանելի վայրում փակցվել է գնացուցակը /ԿԳ նախարարի հրամանով հաստատված /
ինքս եմ տեղեկացել թերթից կամ ինտերնետից (նախարարության կայք, սոցիալական ցանցեր)
այլ
Ընդամենը

13. **Եղե՞լ են դեպքեր, երբ սահմանված վարձավճարից զատ դասագրքերի համար հավելյալ գումար եք վճարել:**

	Պատասխանների հաճախականությունը	%-ային բաշխումը ստացված պատասխանների մեջ
Այո	5	1,8%
Ոչ	271	98,2%
Ընդամենը	276	100,0%

14. **Ինչպիսի՞ առաջարկներ ունեք դպրոցական դասագրքերի բարելավման առումով՝**

_____

Հավելյալ հարցեր <u>լրացուցիչ վճարովի պարապմունքների</u> մասնակցող աշակերտների ծնողներին

Մինչ այս հարցերին անցնելը ճշտել՝ արդյոք երեխան հաճախում է լրացուցիչ վճարովի պարապմունքների:

14. Ձեր երեխան ո՞ր առարկաների շրջանակներում է լրացուցիչ վճարովի պարապմունքների մասնակցում և ինչպիսի՞ն են դրանց պայմանները:

(յուրաքանչյուր առարկայի դիմաց նշել տարբերակների համապատասխան թվերը, "այլ"-ի դեպքում պատասխանը գրել վանդակում)

	Առարկայի անվանումը	**14.1 Լրացուցիչ պարապ-մունք իրականացնող անձը** **1.** տվյալ առարկան դասավանդող ուսուցիչն է **2.** դպրոցի այլ մանկավարժ է՝ ոչ առարկան դասավանդող ***3.*** տվյալ դպրոցի հետ կապ չունեցող անձ է *(անցնել 14.3)* **4.** այլ *(նշել)*	**14.2 Դպրոցի կամ ուսուցչի հետ կնքե՞լ եք պայմա-նագիր, որը կար-գավորում է լրացուցիչ պարապմունքների պայմանները** **1.** այո **2.** ոչ	**14.3 Ամսական վճարի չափը** (ՀՀ դրամով)	**14.4 Շաբաթվա ընթացքում պարապմուն քների քանակը** (միջինում)	**14.5 Որքա՞ն ժամանակ է Ձեր երեխան հաճախում տվյալ առարկայի պարապմունքներ ին** (ամիսներով)	**14.6 Ձեր երեխայի այն համադասարանցի-ների թիվը, որոնք մասնակցում են <u>տվյալ առարկայի</u> պարապմունքներին**	**14.7 Պարապ-մունքների անցկացման հիմնական վայրը** **1.**դպրոց **2.**աշակերտի տուն **3.** ուսուցչի տուն **4.** այլ վայր *(նշել)*
1.								
2.								
3.								

15. **Լրացուցիչ պարապմունքի նախաձեռնում և ազդեցություն առաջադիմության վրա:**

(յուրաքանչյուր առարկայի դիմաց նշել տարբերակների համապատասխան թվերը, “այլ”-ի դեպքում պատասխանը գրել վանդակում)

	Առարկայի անվանումը (պահպանել առաջին հարցի պատասխանում նշված հերթականությունը)	**15.1 Ինչպիսի՞ն է լրացուցիչ պարապմունքների ազդեցությունը Ձեր երեխայի գիտելիքների մակարդակի վրա** **1.** ակնհայտ դրական **2.** ընդհանուր առմամբ՝ դրական **3.** ոչ դրական, ոչ բացասական **4.** ավելի շուտ՝ բացասական **5.** դ.պ.	**15.2 Լրացուցիչ պարապմունքների շնորհիվ Ձեր երեխայի գնահատականը.** **1.** բարձրացել է **2.** մնացել է նույնը **3.** նվազել է **4.** փոփոխվել է, բայց ոչ պարապմունքների շնորհիվ	**15.3 Լրացուցիչ պարապմունքներին մասնակցության հարցում եղե՞լ է արդյոք ուղղակի կամ անուղղակի պարտադրանք/ուղղորդում որևէ մեկի կողմից** **1.** այո **2.** ոչ *(անցնել հարց 15. 5)*	**15.4 Եթե այո, ո՞ւմ կողմից** **1.** առարկան դասավանդող ուսուցչի **2.** դասղեկ/դասվար **3.** դպրոցի տնօրենի/փոխտնօրեն **4.** այլ անձի *(նշել)*	**15.5 Լրացուցիչ պարապմունքներին մասնակցության արդյունքում երեխայի նկատմամբ առարկան դասավանդող ուսուցչի վերաբերմունքը** 1. փոխվել է դեպի դրականը 2. նույնն է մնացել 3. փոխվել է դեպի բացասականը
1.						
2.						
3.						

16. Խնդրում ենք արտահայտել Ձեր համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը բերված դատողություններին: *(շրջանակի մեջ վերցնել պատասխանին համապատասխանող թիվը)*

Ձեր երեխան լրացուցիչ վճարովի պարապմունքների է հաճախում, քանի որ ...	Համաձայն եմ	Համաձայն չեմ
... ցանկանում ենք բարձրացնել գնահատականը		
... դասի ընթացքում չեն հասցնում յուրացնել նյութը (ժամաքանակը քիչ է)		
... դասարանում աշակերտների մեծ թիվը թույլ չի տալիս յուրաքանչյուր աշակերտի անհատական մոտեցում ցուցաբերել		
... դասավանդող ուսուցիչը անտարբեր է/սրտացավ չէ		
... առարկան դասավանդող ուսուցիչը այնքան էլ լավ մասնագետ չէ		
... ընդունելության քննությունների պահանջներն ավելի բարդ են, քան աշակերտներին մատուցված նյութը		

*Եթե հարցվողը դպրոցի ծնողական խորհրդի և կառավարման խորհրդի **անդամ չէ** անցնել հարց 27-ին:*

Լրացուցիչ հարցեր դպրոցի ծնողական խորհրդի անդամների համար

***17.* Ինչպե՞ս են գոյանում Ձեր դպրոցի արտաբյուջետային միջոցները:** *(նշել բոլոր հնարավոր տարբերակները)*

1. նվիրատվություններ
2. լրացուցիչ կրթական ծառայություններ
3. վարձակալության գումարներ
4. դրամաշնորհներ
5. այլ *(նշել)*
6. տեղյակ չեմ
7. մեր դպրոցը չունի արտաբյուջետային միջոցներ

18. Տեղյակ ե՞ք, թե ինչպես են ծախսվում Ձեր դպրոցի արտաբյուջետային միջոցները:

1. Այո - 43.8%
2. Ոչ *(անցնել հարց 20-ին)-56.2%*

19. Ինչպե՞ս եք տեղեկանում, թե ինչպես են ծախսվում Ձեր դպրոցի արտաբյուջետային միջոցները:

Ինչպե՞ս եք տեղեկանում, թե ինչպես են ծախսվում Ձեր դպրոցի արտաբյուջետային միջոցները (մի քանի պատասխան)	%-ին բաշխում
Գրավոր հաշվետվություն են ներկայացնում՝ ծախսերի մասին փաստաթղթերով	
Բանավոր հաշվետվություն են ներկայացնում	
Գրավոր հաշվետվություն են ներկայացնում ՝ առանց ծախսերի փաստաթղթերի	
Ոչ մի կերպ չեմ տեղեկացվում	
Այլ(նշել)	

20. Եթե Ձեզ հաշվետվություն չի տրվում, ապա ինչ եք անում տեղեկանալու համար:

	%-ային բաշխումը
Հարցնում եմ դպրոցի տնօրենին կամ այլ վարչական աշխատողի	
Հարցնում եմ ծնողխորհրդի նախագահին	
Հարց եմ տալիս ծնողական խորհրդի նիստի ժամանակ	
Ոչ մի բան, դա իմ գործը/իրավասությունը չէ	
Ինձ հետաքրքիր չէ	

Լրացուցիչ հարցեր դպրոցի կառավարման <u>խորհրդի անդամ</u> ծնողների համար

Շարունակել հարցումը հետևյալ հարցերով, եթե ծնողը հանդիսանում է դպրոցի կառավարման խորհրդի անդամ:

21. Քանի՞ անգամ է անցկացվել դպրոցական խորհրդի նիստ 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում: *(նշել)* _____

1	
2	
3	
4	
5	
6 և ավելի	

22. Դրանցից քանիսի՞ն եք Դուք մասնակցել: *(նշել)* _____

23. Ե՞րբ է եղել վերջին նիստը *(նշել ամիս/տարի)* _____

24. Ինչպե՞ս եք ծանոթացել ընթացիկ՝ 2015-2016 թթ... *(յուրաքանչյուր տարբերակի համար տարբերակին համապատասխան թիվը գրել վանդակում)*	**1.** անմիջապես նիստի ժամանակ տրամադրվում է **2.** նիստից առնվազն մեկ օր առաջ մեզ ուղարկվում է **3.** բանավոր ներկայացվում է նիստի ժամանակ **4.** ոչ մի ձև չեմ ծանոթացել **5.** այդ հարցով նիստ չի եղել **6**. այլ *(նշել)*
….բյուջեի նախագծին	
…բյուջեի վերանայմանը	
…բյուջեի կատարողականին	

25. Ինչպես եք մասնակցել 2015-2016թթ... *(յուրաքանչյուր տարբերակի համար տարբերակին համապատասխան թիվը գրել վանդակում)*	**1.** խորհրդի նիստի ժամանակ հարցեր եմ տվել **2.** խորհրդի նիստի ժամանակ առաջարկություններ եմ արել **3**. խորհրդի նիստի ժամանակ քվեարկել եմ **4.** պարզապես լսել եմ քննարկումը **5**. ոչ մի ձև չեմ մասնակցել **6.** այդ հարցով նիստ չի եղել

	7. այլ *(նշել)*
….բյուջեի նախագծի քննարկմանը և հաստատմանը	
…բյուջեի վերանայման քննարկմանը	
…բյուջեի կատարողականի քննարկմանը և հաստատմանը	

26. <u>Խորհրդի անդամներից</u> քանի՞սն են մասնակցել վերջին նիստին: *(նշել մեկ պատասխան)*

27. Նշեք Ձեր երեխայի տարիքը _____

28. Նշեք Ձեր երեխայի դասարանը _____

29. Նշեք Ձեր երեխայի դասարանում սովորող աշակերտների թիվը _____

30. Մարզ _____

31. Համայնք _____

32. Դպրոց _____

Հավելված 5. Տեղեկատվության հարցում դպրոցի տնօրեններից

_____ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրեն _____ _____
Հասցե. Հայաստան, _____

Քաղաքացիական երիտասարդական կենտրոնի մոնիտորինգային խմբի ղեկավարից,

Տեղեկության հարցում համար ___ 16 մայիսի, 2016

Հարգելի տիկին/պարոն տնօրեն,

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) հետ համագործակցությամբ, և ԹԻՀԿ, ԱՄՆ ՄԶԳ և ԲՀՀ-Հայաստանի աջակցությամբ իրականացնում է «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագիրը, որի նպատակն է խթանել տարբեր ոլորտների հանրային քաղաքականության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այս ծրագրի շրջանակներում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի հիմնադրած մարզային քաղաքացիական երիտասարդական կենտրոնները իրականացնում են բոլոր տասը մարզերի թվով 40 հանրակրթական դպրոցների մոնիտորինգ, ուսումնասիրելով հանրային միջոցների ծախսման արդյունավետության և կրթության մատուցման հետ կապված իրավիճակը: Ծրագրի իրականացման համար մշակվել է հատուկ մեթոդաբանություն, որն ուսուցանվել է մոնիտորինգով զբաղվող երիտասարդական խմբերին, որոնցից մեկի ղեկավարը ես եմ: Մեթոդաբանությունը ներկայացվել է ՀՀ ԿԳՆ նախարարին, քննարկվել է հանրակրթության վարչության պետ Ն.Հովհաննիսյանի հետ, արժանացել է նրա հավանությանը: Մոնիտորինգի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել դպրոցների տնօրենների մոտ առկա մի շարք տեղեկություններ, անցկացնել հարցազրույցներ տնօրենների, խորհուրդների անդամների, աշակերտների և նրանց ծնողների հետ: Ուսումնասիրությունը կեզրափակվի վերլուծությամբ և զեկույցով, որի հրապարակումից առաջ մարզկենտրոններում ուսումնասիրության արդյունքներով կկազմակերպվեն հանրային քննարկումներ: Այս տեղեկության հարցմանը կցում ենք ՀՀ ԿԳՆ նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանի 2016 թ. մայիսի 10-ի աջակցական նամակը, որով հաստատում է, որ ԿԳ նախարարությունը չի առարկում մոնիտորինգի անցկացմանը:

Մոնիտորինգի արդյունավետ անցկացման համար, մենք կարիք ունենք Ձեզ մոտ տնօրինվող և օրենքով սահմանված գաղտնիք չհանդիսացող մի շարք տեղեկությունների և, առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունները: Խնդրում եմ այս հարցմանն ի պատասխան տրամադրել ստորև ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ 2013-2014, 2014-2015, 2015-2016 ուսումնական տարիների համար.

1. Դպրոցի եկամուտների ու ծախսերի հաստատված նախահաշվի և փաստացի կատարողականի համեմատական ցուցանիշներ,
2. Ուսումնական հաստատության հաստիքային ցուցակը, տարիֆիկացիոն և հաստիքային ցուցանիշներն ու տվյալները,
3. Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունների պատճենները,

4. Ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների պատճեները:
5. Աշակերտների ծնողների հետ կնքված՝ վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման (ՀՀ Կառավարության 2010թ. 1496-Ն որոշմամբ հաստատված կարգը:) պայմանագրերի (ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. 1672-Ն հրամանով հաստատված պայմանագիրը) պատճենները,
6. Դպրոցին պատկանող տարածքի անհատույց տրամադրման մասին պայմանագր(եր)ի պատճեները, եթե այդպիսիք կան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է, որ Դուք, որպես պետական բյուջեից ֆինանսավորում ստացող կազմակերպության տնօրեն, տարեկան առնվազն մեկ անգամ պարտավոր եք հրապարակել մի շարք տեղեկություններ, այդ թվում դպրոցի բյուջեն և հաստիքացուցակը:

Խնդրում եմ հնարավորության դեպքում բոլոր այս տեղեկությունները ինձ տրամադրել, դրանք ուղարկելով իմ էլեկտրոնային հասցեին:

Հարգանքներով՝
Տեղեկություն հարցնող _____